



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 106 2018

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեվանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 26.07.2018թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Շավաղ՝ 4 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԽԱՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

ՀՀ դատախազությունը նշում է հիմնադրման 100-ամյակը	3
Երևանում կայացել է ԱԴՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նիստը. քննարկվել են այդ ոլորտում միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման խնդիրները	4
ԵՆ պատվիրակության հետ ՀՀ գլխավոր դատախազությունում քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների ամրապնդման խնդիրները	6

ԿՈՒԵԳԻԱ

ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում քննարկվել են կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի և պետությանը պատճառված վնասների վերականգնման խնդիրները	7
--	---

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գայանե Մելիքյան Կողմերի մրցակցությունը և հավասարությունը քրեական դատավարությունում	9
Վարդուհի Սարգսյան Վճռաբեկ բողոքի նախնական քննության արդյունքով կայացվող դատական ակտերի տեսակները	16
Արմինե Մելիքսեթյան Դատարանների իրավական դիրքորոշումների նշանակությունը քրեաիրավական գնահատողական կատեգորիաների մեկնաբանման գործընթացում	21

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արմինե Չոբանյան Պարտադիր (հարկադիր) մեղիացիայի կիրառման իրավական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում	26
--	----

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անահիտ Պետրոսյան Մուսուլմանական արգելքի օրինականությունը, տարածքի հանձնումն ու ապաստանի հայցումը միջազգային հանրային իրավունքի տեսանկյունից	32
--	----

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Вачик Брутян Повышение правосознания юристов, как эффективное условие реализации антикоррупционной политики РА	38
Աննա Հակոբյան Նախադեպը ընդհանուր իրավունքի աղբյուրների համակարգում	42

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գրիգոր Ներսիսյան Բյուջետային վերահսկողության իրավական կարգավորման առանձնահատկություններն արտասահմանյան երկրներում	49
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	54
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	64
--	----

ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆԸ ՆՇՈՒՄ Է ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Հուլիսի 1-ին, Դատախազության աշխատողի օրը, շուքով նշվել է Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգի ներդրման 100-ամյակը: Վերջինիս նվիրված ՀՀ դատախազության կոլեգիայի հանդիսավոր նիստին և միջոցառումներին մասնակ-



ցելու համար Հայաստան են ժամանել բարձր մակարդակով պատվիրակություններ Դատախազների միջազգային ասոցիացիայից, ԱՊՀ գործադիր կոմիտեից, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդից, ԱՊՀ գլխավոր դատախազների համակարգող խորհրդից, ինչպես նաև Արցախի, ՌԴ-ի, ՉԺՀ-ի, Վրաստանի, Հունաստանի, Ռումինիայի, Էստոնիայի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի գլխավոր դատախազություններից:

Դատախազության 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին մասնակցել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, իրավապահ մարմինների ղեկավարները, նախկին գլխավոր դատախազները, դատախազության համակարգի վետերանները և այլք:

Դատախազության աշխատողի օրվա և համակարգի հիմնադրման 100-ամյա հոբելյանի կապակցությամբ շնորհավորական ելույթով հանդես է եկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն իր ելույթում շնորհակալություն է հայտնել

ներկաներին՝ դատախազության համակարգի համար նշանակալի պատմական իրադարձությունը միասին նշելու համար, ներկայացրել և արժևորել է Հայաստանում դատախազության համակարգի ստեղծման, կայացման ու զարգացման անցած ճանապարհը, պետականության հիմքերի ամրապնդման, հանցավորության դեմ պայքարում, օրինականության և իրավակարգի հաստատման գործում ունեցած դերն ու նշանակությունը, այդ առաքելության իրագործման ճանապարհին պետական, հատկապես՝ իրավապահ մյուս մարմինների, տարբեր երկրների գործընկեր դատախազությունների հետ արդյունավետ աշխատանքը, ինչպես նաև անդրադարձել է նոր հարյուրամյակի շեմին համակարգից հասարակության սպասելիքների և դրանց համահունչ բարեփոխումների ընթացքի մասին:

«Գիտակցելով մեր ընտրած մասնագիտության հասարակական նշանակությունը՝ հասկանում ենք, որ պետք է առաջ շարժվենք՝ համարձակորեն մերժելով նաև նախկին գործելաճի՝ հանրության համար ոչ ընկալելի դրսևորումները, միաժամանակ հիմնվելով ժառանգություն ստացած լավագույն ավանդույթների վրա և լինելով բավականաչափ ճկուն՝ տեղեկատվական դարաշրջանում իրավագիտակցության բարձրացման աննախադեպ ընթացք ապրող մեր հանրության մեծացող պահանջների հանդեպ:

Այսօր հասարակությունը մեր առջև դրել է պահանջների բարձր չափանիշներ: Հայաստանի մերօրյա քաղաքացու տեսլականում դատախազը մարմնավորում է ոչ միայն պետական իշխանությունն ու օրենքը, այլև արդարամտությունն ու մարդասիրությունը՝ մեզանից պահանջելով առօրեական դարձնել օրենքի գերակայության, իրավապաշտպանության, արդարության արժեքները, որոնցով հնարավոր է հասարակությանը ներշնչել անխոչընդոտ ստեղծագործ և հայրենաշեն աշխատանքի: Մենք հպարտանում ենք այն դատախազներով, ովքեր ընկալում են այս ազդակները, և ում հա-

մար հանրությանը և օրենքին ծառայելը, անձնական և մասնագիտական պատիվ հասկացությունը, իր գործին նվիրվածությունը, պետական մտածողությունը միայն խոսքեր չեն», - ասել է Արթուր Դավթյանը՝ դատախազներին և դատախազության աշխատակիցներին նաև շնորհավորելով մասնագիտական օրվա առթիվ:

Հայաստանի Հանրապետության դատախազությանն ուղղված շնորհավորական ելույթով է հանդես եկել Դատախազների միջազգային ասոցիացիայի նախագահ Գերհարդ Յարոշը՝ իր ելույթում կարևորելով Հայաստանի դատախազության ակտիվ մասնակցությունը միջազգային համագործակցության տարբեր ձևաչափերում:

ՀՀ դատախազության 100-ամյակի կապակցությամբ շնորհավորական ուղերձներ են հղել նաև ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ Սերգեյ Լեբեդևը, կոռուպցիայի դեմ պայքարի միջպետական խորհրդի և ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի նախագահ, ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկան:

Հանդիսավոր նիստի շրջանակներում տեղի է ունեցել նաև ՀՀ դատախազության վետերանների միության նախաձեռնությամբ և մի-

ջոցներով լույս տեսած ՀՀ դատախազության 100-ամյա հոբելյանին նվիրված գրքի շնորհանդեսը:

Միջոցառումներին մասնակցելու համար Հայաստան ժամանած պատվիրակությունները Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ծաղիկներ են խոնարհել Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակին, ապա այցելել Երևանի «Նոյ» գինու, կոնյակի և օղու գործարան: Նրանք ծանոթացել են կոնյակագործության հայկական ավանդույթներին ու մշակույթին, մասնակցել ՀՀ դատախազության 100-ամյակի կապակցությամբ կոնյակի տակառի զմռսման արարողությանը:

Բացի դրանից՝ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Աշոտ Հակոբյանի, «Հայփոստ» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ավագյանի և Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ Հովիկ Մուսայելյանի մասնակցությամբ մարվել եւ շրջանառության մեջ է դրվել ՀՀ Դատախազության 100-ամյա հոբելյանին նվիրված նամականիշ:

Երեկոյան տոնական օրվա առթիվ ՀՀ գլխավոր դատախազի անունից տրվել է հանդիսավոր ընթրիք:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՋԵԼ Է ԱՊՀ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԱԸ. ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԱՅՂ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻԶԱԶՎԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՋՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 106 2018

Հուլիսի 2-ին Երևանում կայացել է ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նիստը, որին, բացի Հայաստանից, մասնակցել են անդամ մյուս երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղրղզստանի դատախազությունների, Ղազախստանի պետական ծառայության և կոռուպցիայի հակազդման գործերով գործակալության պատվիրակությունները:

Մինչ նիստի մեկնարկը Խորհրդի անդամ երկրների պատվիրակությունների ղեկավար-

ներին ընդունել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: ՀՀ վարչապետը մեծապես կարևորել է կոռուպցիայի՝ որպես գլոբալ մարտահրավերի դեմ պայքարում ԱՊՀ երկրների ուժերի համատեղումը և այդ նպատակով կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի շրջանակներում համագործակցության արդյունավետ կառուցակարգերի գործարկումը: ՀՀ վարչապետը հաջողություններ է մաղթել Խորհրդի մեկնարկող աշխատանքներին:

Նիստի ընթացքում քննարկվել են կոռուպ-

ցիայի դեմ պայքարում անդամ երկրների միջև համագործակցության արդյունավետության բարձրացման մեթոդներին առնչվող հարցեր, ինչպես նաև Միջպետական խորհրդի նախորդ նիստին ընդունված՝ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված որոշումների իրականացման արդյունքները, կոռուպցիայի հակազդման ոլորտում ԱՊՀ անդամ երկրների համագործակցության համաձայնագրի նախագծի շուրջ ըն-

թացող աշխատանքները: Վերջինս ուղղված է ԱՊՀ-ի շրջանակում կոռուպցիայի հակազդման իրավա-կազմակերպական հիմքերի ստեղծմանը, այս ոլորտում անդամ երկրների փոխգործակցության սկզբունքների, նպատակների հստակեցմանը:

Իր ելույթում ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը նշել է, որ, ձեռք բերելով անդրազգային բնույթ՝ կոռուպցիան դադարել է լինել



միայն երկրների ներքին խնդիրը: Այդ տեսանկյունից, ըստ ՀՀ գլխավոր դատախազի, կոռուպցիայի արդյունավետ հակազդման գործում գնալով ավելի են կարևորվում միջազգային իրավական համագործակցությունը և ուժերի համատեղումը, ուստի Հայաստանի դատախազությունը պատրաստ է իր ներդրումն ունենալ այդ չարիքի դեմ համընդհանուր պայքարին միտված համատեղ աշխատանքում: Արթուր Դավթյանը շեշտել է անդրազգային մակարդակում կոռուպցիայի դեմ համակարգված պայքարում անդամ երկրների միջև փորձի և տեղեկատվության ակտիվ փոխանակումը:

Ելնելով դրանից՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հայկ Ասլանյանը ներկայացրել է Հայաստանում վերջերս ինչպես ինստիտուցիոնալ մակարդակով, այնպես էլ քրեաիրավական ոլորտում իրականացված բարեփոխումները, որոնք արդեն սկսել են իրական արդյունքներ ապահովել: Մասնավորապես՝ նշվել է կոռուպ-

ցիոն հանցագործությունների դասակարգումը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու, ապօրինի հարստացումը քրեականացնելու, հակակոռուպցիոն մարմին ստեղծելու, «ազդարարի» ինստիտուտ ներդնելու, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ուղղությամբ իրավապահ մարմինների համակարգված աշխատանքների ակտիվացման արդյունքների մասին:

Նիստի մասնակիցները հաստատել են համատեղ գործունեության առաջիկա տարվա պլանը, ընդունել կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի և ԱՊՀ գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի միջև համագործակցության համաձայնագիրը: Նմանատիպ փաստաթուղթ է ստորագրվել նաև կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի և ԱՊՀ անդամ երկրների ֆինանսական հետաքննության մարմինների համակարգող խորհրդի միջև:

Հանդիսավորությամբ տրվել է կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության ընկալումների ձևավորմանը միտված՝ «Միասին ընդդեմ կոռուպցիայի» թեմայով սոցիալական հակակոռուպցիոն գովազդի միջազգային երիտասարդական մրցույթի մեկնարկը: Վերջինիս շրջանակում Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի 14-ից 35 տարեկան մասնակիցներին առաջարկվում է մինչև այս տարվա հոկտեմբերի 19-ը պատրաստել և ներկայացնել նշված խորագրով պաստառներ և տեսանյութեր:

Կանոնադրությամբ սահմանված կարգով մեկամյա ժամկետով ընտրվել է Միջպետական խորհրդի նոր ղեկավար կազմ. այդ ժամկետով ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընտրվել է Խորհրդի նախագահ:

Կանոնադրությամբ սահմանված կարգով մեկամյա ժամկետով ընտրվել է Միջպետական խորհրդի նոր ղեկավար կազմ. այդ ժամկետով ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընտրվել է Խորհրդի նախագահ:

ԵՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՏ ՀՀ ՉԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԵԱՐԿՎԵԼ ԵՆ ԿՈՌՈՒՊՅԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տնտեսական հանցագործությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցների ամրապնդման ոլորտում «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի երկրորդ փուլին (2019-2021թթ.) նախապատրաստվելու շրջանակում հունիսի 4-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն էին այցելել Երևանում Եվրոպայի Խորհրդի գրասենյակի ղեկավարի տեղակալ Լորենտա Վիոլին և Եվրոպայի Խորհրդի Տնտեսական հանցագործությունների և համագործակցության վարչության աշխատանքային խումբը:

տավարական ղեկավարում իրականացնող դատախազների մասնագիտական որակների կատարելագործմանը, ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածով նախատեսված՝ ապօրինի հարստանալու հանցագործության քննության մեթոդական ուղեցույցի մշակմանը, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ քննող մարմինների միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանն առնչվող հարցեր:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են եվրոպական երկրներում վերապատրաստումների միջոցով կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների մասնագիտական որակների կատարելագործմանը, ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածով նախատեսված՝ ապօրինի հարստանալու հանցագործության քննության մեթոդական ուղեցույցի մշակմանը, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ քննող մարմինների միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանն առնչվող հարցեր:

Կարևորվել է այդ ոլորտներում եվրոպական երկրների առաջադեմ փորձի ուսումնասիրությունը և, միաժամանակ, ՀՀ իրավապահ մարմինների փորձի փոխանցումը:

Արժևորվել են Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի հետ Հայաստանի Հանրապետության դատախազության երկարամյա համագործակցության շոշափելի արդյունքները, փոխադարձ վստահություն է հայտնվել դրա շարունակականությունն ապահովելու կապակցությամբ:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 106 2018

ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԿՈՌՈՒԴՅՈՒՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հուլիսի 23-ին տեղի է ունեցել ՀՀ դատախազության կոլեգիայի արտահերթ նիստ, որը վարել է ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը:

Նիստի ընթացքում քննարկվել են առանձին հանցատեսակների և մասնավորապես՝ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի, դրա շրջանակում դատախազական



հսկողության արդյունքները, այդ գործընթացում առաջացող խնդիրները, պետությանը պատճառված վնասների հայտնաբերման, վերականգնման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Այս համատեքստում, նկատի ունենալով, մասնավորապես, սոցիալական նպաստների տրամադրման գործընթացում կոռուպցիոն շղթաների և սխեմաների բացահայտման ուղղությամբ արձանագրված արդյունքները՝ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն անհրաժեշտ է համարել հանրապետության ամբողջ տարածքում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարում դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից նախաձեռնողականությամբ էապես ակտիվացնել օպերատիվ-հետախուզական գործառույթներով օժտված տարածքային մարմինների աշխատանքները:

ՀՀ գլխավոր դատախազը ևս մեկ անգամ կարևորել է հետաքննության և նախաքննության, ինչպես նաև ստուգող, տեսչական մարմինների հետ բարձր մակարդակի համագործակցության, ձեռնարկվող միջոցառումների օպերատիվության ապահովումը:

Չնայած արդեն իսկ արձանագրած արդյունքներին՝ խնդիր է դրվել նաև առանձնահատուկ հետևողականություն ցուցաբերել պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու դատախազական գործառույթի իրացմամբ, տարբեր հանցագործությունների դեպքերով քննությունների շրջանակներում պետությանը պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ:

Նշվել է, որ ՀՀ դատախազության նախաձեռնությամբ իրականացված բազմաուղրոտ ուսումնասիրությունների՝ միայն այս տարվա հունիս-հուլիս ամիսների ընթացքում հրապարակված արդյունքներով բազմաթիվ օրինախախտումներ, առերևույթ հանցակազմ պարունակող չարաշահումներ են բացահայտվել ընդերք-օգտագործման և բնական պաշարների արդյունահանման և իրացման, տարբեր հարկատեսակներով հարկային պարտավորությունների կատարման, պետական գնումների գործընթացի, հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի տրամադրման, տավարաբուծության, շինարարական աշխատանքների պետական ծրագրերի իրականացման, ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար վարչական տուգանքների վճարման և այլ ոլորտներում:

Միայն հրապարակված այդ իրավախախտումների, առերևույթ հանցավոր արարքների հետևանքով պետությանը հասցված՝ նախնական հաշվարկված վնասի չափը կազմում է մոտ 6 մլրդ 700 մլն դրամ:

Ուսումնասիրությունների արդյունքով բացահայտված՝ միայն նշված երկու ամսվա ըն-

թացքում հրապարակված առերևույթ փաստերի առթիվ հարկերից, տուրքերից կամ պարտադիր այլ վճարները խոշոր չափերով կատարելուց խուսափելու, առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելու, առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ փաստաթղթեր կեղծելու, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, ծառայության նկատմամբ անփույթ վերաբերվելու, խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով առանձնապես խոշոր չափերով գույքային վնաս պատճառելու, պաշտոնեական կեղծիք կատարելու հանցագործությունների հատկանիշներով կամ դրանց տարբեր համակցություններով ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 18 քրեական գործ (ևս մեկով նյութեր են նախապատրաստվում): Բոլոր գործերով նախաքննությունն ընթացքի մեջ է: Լայն ծավալով կատարվում են անհրաժեշտ քննչական և դատավարական այլ գործողություններ, այդ թվում նաև համապատասխան փորձաքննությունների նշանակմամբ՝ առավել հստակեցնելու պետությանը պատճառված վնասի չափերը, բավարար հիմքերի առկայության դեպքում պետական շահերի պաշտպանության հայցերի հարուցմամբ դրանց վերականգնմանը հետամուտ լինելու համար, պարզելու արձանագրված առերևույթ հանցագործությունների դեպքերով կոռուպցիոն սխեմաների հնարավոր առկայությունը, դրանցում պատասխանատու պաշտոնատար անձանց ներգրավվածությունը, ինչպես նաև պետական միջոցների փոշիացման մեխանիզմները:

Մեծապես կարևորվել է վարույթի ընթացքում քրեական հետապնդումներին զուգահեռ նմանատիպ հանցագործությունների կատարման մեջ մեղադրվողների գույքի վրա կալանք դնելու, ինչպես նաև պետությանը պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ ի-

րավական բոլոր այլ մեխանիզմների գործունե կիրառման անհրաժեշտությունը:

Հարուցված քրեական գործերի, առանձին ոլորտներում շարունակվող ուսումնասիրությունների ամբողջականությունն ապահովելու և արձանագրված դրսևորումներին անհրաժեշտ իրավական գնահատականներ տալու նպատակով պետական կառավարման իրավասու բազմաթիվ մարմինների հարցումներ են արվել կամ նրանցից լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր են պահանջվել: Այն դեպքերում, երբ արձանագրված առերևույթ իրավախախտումները կամ հանցավոր արարքները կատարվել են տնտեսվարող սուբյեկտների կամ կազմակերպությունների կողմից, ՀՀ դատախազության կողմից կամ նրա պահանջով համապատասխան մարմինների կողմից նրանց ներկայացվել են պարտավորությունները կամովին կատարելուն ուղղված նախազգուշացումներ, որոնց արդյունքով արդեն իսկ իրականացվել են վնասների հատուցմանն ուղղված քայլեր:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հատուկ ընդգծել է, որ քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության և դատավարական ղեկավարման իրենց գործառնությունների իրականացման ընթացքում դատախազները առանձնահատուկ բժախնդրությամբ պետք է հետևեն, որպեսզի պահպանվի քրեադատավարական բոլոր գործողությունների լիարժեք համապատասխանությունն օրենսդրությանը, իսկ դատավարության բոլոր մասնակիցների իրավունքները պատշաճ ապահովվեն:

Առաջիկայում առավել մանրամասն քննարկման և գնահատման կարժանանան նշված ուղղություններով իրականացվող աշխատանքների միջանկյալ արդյունքները, ինչպես նաև կոլեգիայի արտահերթ նիստի ընթացքում կայացված որոշումների և տրված հանձնարարականների կատարման վիճակը:

ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության մագիստրոս,
 ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

**ԿՈՂՄԵՐԻ ՄՐՁԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ
 ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մարդու իրավունքներին բնորոշ առանձնահատկություններից է այն, որ պետության հետ հարաբերություններում պետական իշխանության մարմիններն օժտված են ավելի լայն հնարավորություններով: Եվ որպեսզի այդ մարմինները չգործադրեն իրենց լայն լիազորությունները և մյուս կողմին չդնեն ակնհայտ անհավասար վիճակի մեջ, մի շարք պետությունների Սահմանադրություններում, ճյուղային օրենսդրություններում, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերում (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդված, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների դաշնագրի 14-րդ հոդված, և այլն) և, հատկապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա) ամրագրված է յուրաքանչյուր անձի արդարացի դատաքննության իրավունքը, որի բազմաթիվ տարրերից մեկը կողմերի հավասարության և մրցակցության ապահովումն է:

Այսպես՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները, չնայած այն հանգամանքին, որ ուղղակիորեն ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեքստում ինչպես, օ-

րինակ՝ ողջամիտ ժամկետը, հրապարակային դատաքննությունը և այլն, կազմում են արդարացի դատական քննության իրավունքի պարտադիր բաղադրիչը, ինչը բազմիցս փաստվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) մի շարք որոշումներով¹:

Այժմ, հենվելով Եվրոպական դատարանի իրավունքի վրա, փորձենք հասկանալ, թե ինչ են կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները, և ինչպես են այդ երկու սկզբունքը հարաբերակցվում քրեական դատավարության տարբեր փուլերում:

Եվրոպական դատարանը, իր մի շարք որոշումներով անդրադառնալով կողմերի հավասարության սկզբունքին, արձանագրում է. «Այն դատական քննությունների ժամանակ, որտեղ բախվում են հակադիր մասնավոր շահեր, հենց «կողմերի հավասարությունն» է ենթադրում, որ յուրաքանչյուր կողմ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա ներկայացնելու իր գործը՝ ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններում, որտեղ կողմերից ոչ մեկը չունի ակնհայտ առավելություն²»:

Եվրոպական դատարանի վերը տրված բնորոշումից կարող ենք առանձնացնել հետևյալ պայմանները.

- 1) քննարկվող սկզբունքը ենթադրում է «արդար հավասարակշռություն» կողմերի միջև,
- 2) յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործը, ներառյալ ապացույցները,
- 3) յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի հնարավորություն՝ շարադրելու իր դիրքորոշու-

¹ Տե՛ս Եվրոպական դատարանի Brandstetter v. Austria գործով 1991 թվականի օգոստոսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 13468/8766-67 կետերը:
² Տե՛ս Եվրոպական դատարանի Dombo Beheer B.V. v. The Netherlands գործով 1993 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ, գանգատ թիվ 14448/8827 կետ 33:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 106 2018

մը այնպիսի պայմաններում, որոնք այդ կողմին հակառակ կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակի մեջ³:

Միևնույն ժամանակ, ինչպես նկատեցինք՝ խոսքն ամենևին էլ կողմերի կատարյալ հավասարության մասին չէ, և ազգային օրենսդրությունն արդար հավասարակշռության պահանջը կարող է կատարել տարբեր կերպ, սակայն դրանով նախատեսված միջոցը պետք է երաշխավորի, որ կողմը կունենա բավարար հնարավորություններ՝ հակառակ կողմի գործողություններին հակազդելու համար:

Այս համատեքստում ավելացնենք նաև, որ, ըստ դատարանի՝ անհավասարության ոչ բոլոր դեպքերն են պարտադիր հանգեցնում զենքերի հավասարության սկզբունքի խախտման⁴, սակայն անընդունելի է համարում մի կողմի էական առավելություններով դատավարությունը: *Bulut v. Austria*-ի գործով վճռում դատարանը համարում է, որ գլխավոր դատախազի կողմից ներկայացված մեկնաբանությունները, որոնց ծանոթ չի եղել պաշտպանության կողմը և, փաստորեն, զրկված է եղել իր դիտողությունները ներկայացնելու իրավունքից՝ խախտում է կողմերի հավասարության սկզբունքը: Դատարանը տվյալ գործով նշում է, որ պաշտպանության կողմը պետք է գնահատի, թե արդյոք մեղադրանքի կողմի մեկնաբանություններն արժանի են պատասխանի, թե՞ ոչ: Որոշման տեքստում մեղադրանքի կողմի արած եզրահանգումները մեկնաբանելու անուղղակի և զուտ տեսական հնարավորությունը, Դատարանի տեսանկյունից, ամբաստանյալի համար չի կարող համարվել համարժեք դրանք անմիջականորեն ուսումնասիրելու և վիճարկելու նրա իրավունքին⁵:

Հատկանշական է նաև այն, որ դատարանը նշում է, որ կողմերի հավասարության սկզբունքի

խախտման կարող են հանգեցնել ոչ միայն օրենսդրական թերի կարգավորումները, այլ նաև փաստացի իրավիճակը: *Makhfi v. France* գործով վճռում դատարանը եզրակացրել էր, որ այն հանգամանքը, որ պաշտպանը ստիպված է եղել 15 ժամ սպասել մինչև իր պաշտպանյալի հետ հանդիպելը, խախտել է կողմերի հավասարության սկզբունքը: Դատարանը համարում է, որ նույնիսկ հոգնածությունը կարող է հանդիսանալ քննարկվող սկզբունքի խախտման պատճառ⁶:

Ինչպես արդեն նշեցինք՝ կողմերի հավասարությունը ավելի լայն սկզբունքի՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս է, որը ներառում է այնպիսի հիմնարար իրավունք, ինչպիսին դատաքննության մրցակցային բնույթն է: Դատարանը նշում է, որ կողմերի հավասարության սկզբունքը չափազանց կարևոր է, քանի որ ենթադրում է կողմի պաշտպանության կամ մրցակցային բանավեճի իրավունքի պահպանում: Դրանք այն կարևոր երաշխիքներից են, որոնց հիմքում ընկած է քննարկվող սկզբունքը: Դատարանը հիշեցնում է նաև, որ գործով ձեռք բերված ապացույցները պետք է ներկայացվեն կողմերին հրապարակային դատաքննության ընթացքում այնպես, որ պահպանվի մրցակցային վիճաբանության հնարավորությունը⁷:

Դատարանի նախադեպային իրավունքից ենթադրվում է, որ մրցակցության սկզբունքը ներառում է՝

- 1) ցանկացած հանգամանք, որը կարող է ազդել գործի լուծման վրա, պետք է դառնա կողմերի քննարկման առարկան,
- 2) յուրաքանչյուր կողմ պետք է ունենա՝
 - պարտականություն՝ հայտնի դարձնելու այն փաստերը, որոնց վրա հիմնվում են իր պահանջները,

³ Տե՛ս Եվրոպական դատարանի *Bulut v. Austria* գործով 1996 թվականի փետրվարի 22-ի վճիռ, գանգատ թիվ 17358/90 45-47 կետեր, տե՛ս նաև՝ *Foucher v. France* գործով 1997 թվականի մարտի 18-ի վճիռ, գանգատ թիվ 22209/93, 27-30 կետեր., *Platakou v. Greece* գործով 2001 թվականի հունվարի 11-ի վճիռ, գանգատ թիվ 38460/97 47-48 կետեր:

⁴ Տե՛ս Եվրոպական դատարանի *Ankerl v. Switzerland* գործով 1996 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռ, գանգատ թիվ 17748/91, 36-37 կետեր:

⁵ Տե՛ս Եվրոպական դատարանի *Bulut v. Austria* գործով 1996 թվականի փետրվարի 22-ի վճիռ, գանգատ թիվ 17358/90, 47 կետ, տե՛ս նաև՝ Եվրոպական դատարանի *Borgers v. Belgium* գործով 1991 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռ, գանգատ թիվ 12005/86 3,6 կետ;

⁶ Տե՛ս Եվրոպական դատարանի *Makhfi v. France* գործով 2004 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռ, գանգատ թիվ 59335/00 33 կետ:

⁷ Տե՛ս *The Principle of equality of arms-Part of the right to fair trial Elisa Toma Legal Advisor S.C. UPC Romania S.R.L.*, էջ 3:

– հնարավորություն ունենա ծանոթանալու և քննարկելու դատարանին իր դեմ ներկայացված ցանկացած մեղադրանքի, ապացույցի կամ փաստաթղթի⁸:

Դատարանն ավելացնում է նաև, որ նշանակություն չունի, թե այն հանգամանքը, որը կարող է ազդել գործի ելքի վրա, քննարկման է ներկայացվել դատավարության կողմերի, թե՛ ձեռք է բերվել դատարանի կողմից ի պաշտոնե, մինչև այն է՝ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել դա:

Դատարանը համարում է նաև, որ մրցակցությունը քրեական դատավարության ոլորտում, հնարավորություն է տալիս պաշտպանության կողմին վիճարկելու տուժողի կողմից կատարված պնդումը հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) միջոցով կամ հնարավորություն ունենալու հարցաքննել տուժողին դատական քննության ընթացքում: Այս հայտարարությամբ դատարանն ընդգծում է, որ կողմերի հավասարության սկզբունքը տարածվում է նաև տուժող-մեղադրյալ հարաբերությունների վրա: Ավելին՝ դատարանը համարում է նաև, որ կողմերի միջև մրցակցություն ապահովելու նկատառումով պետությունները պարտավոր են այնպես փոփոխել իրենց ներպետական օրենսդրությունները, որ գոյություն ունեցող ապացույցները, որոնք ներկայացվում են հրապարակային դատաքննության ընթացքում, դատարանի առջև դառնան մրցակցային բանավեճի առարկա մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև: Այս համատեքստում դատարանն ավելացնում է նաև, որ ապացույցները, հատկապես՝ որոնք ձևավորվել են վկայության ընթացքում, պետք է ներկայացվեն դատարանին՝ անկախ այն հանգամանքից, որ դրանք ներկայացվել են դատախազին, և այդ ընթացակարգի շրջանակներում պաշտպանության կողմն ունեցել է դրանք վիճարկելու հնարավորություն: Այս առումով՝ Եվրոպական դա-

տարանը եզրակացրել է, որ Ռումինիայի Գերագույն դատարանը խախտել է մրցակցության սկզբունքը, քանի որ իր որոշման հիմքում դրել է մի փորձագիտական եզրակացություն, որը մյուս կողմին հասանելի չի եղել⁹:

Մրցակցության համատեքստում անդրադառնալով դատախազի լիազորություններին՝ Նախարարների կոմիտեն իր 2012թ. սեպտեմբերի 19-ի որոշման մեջ նշել է, որ մինչդատական փուլի նկատմամբ դատախազական հսկողության ընթացքում դատախազը չպետք է օժտված լինի անհիմն առավելություններով, և վեճի առարկա ցանկացած ապացույց պետք է տրամադրվի նաև մյուս կողմին¹⁰:

Ինչպես նկատեցինք՝ քննարկվող սկզբունքները շատ մոտ են իրար, և Makhfi v. France գործով դատարանը նշում է, որ կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները դիտում է միասնաբար: Մինչև այն ժամանակ՝ դատարանը նշում է, որ կողմերի հավասարությունը չպետք է շփոթել մրցակցության հետ, և նշված սկզբունքների միջև կապը պետք է հստակեցվի՝ հաշվի առնելով դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունները, նմանություններն ու փոխազդեցությունը: Դատարանը, մասնավորապես, նշում է, որ երկու սկզբունքն էլ վերաբերում են՝

1) փաստարկների, փաստաթղթերի, հանգամանքների (elements), ապացույցների՝ դատարան ներկայացման եղանակին,

2) իրականացվող դատական քննության առանձնահատկություններին¹¹:

Այս երկու սկզբունքի հիմնական տարբերությունները հետևյալն են՝

1) գեներալի հավասարության սկզբունքն առավելապես վերաբերում է կողմերի կարգավիճակին, նրանց տրված դատավարական իրավունքների հավասարակշռությանը,

2) մրցակցության սկզբունքը վերաբերում է դատավարության ընթացակարգն ապահո-

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս Եվրոպական դատարանի Dima v. Romania գործով 2006 թվականի նոյեմբերի 16-ի վճիռ, գանգատ թիվ 58472/00 40 կետ:

¹⁰ Տե՛ս Նախարարների կոմիտեի «Դատախազների դերը քրեաիրավական ոլորտից դուրս» 2012թ. սեպտեմբերի 19 հանձնարարականի 13, 14 կետերը:

¹¹ Տե՛ս Եվրոպական դատարանի Borgers v. Belgium գործով 1991 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռ, գանգատ թիվ 12005/86 3,6 կետ; Եվրոպական դատարանի Makhfi v. France գործով 2004 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռ, գանգատ թիվ 59335/00 40 կետ:

վող կանոններին կամ որոշում կայացնելու մեթոդներին:

Դատարանը, փորձելով տարբերակել նշված երկու սկզբունքը՝ *Niderost-Huber vs Swizerland* գործով նշում է, որ մի կողմի ներկայացրած փաստաթղթերին մյուս կողմին չձանթթացնելը անդրադառնում է այդ կողմի վիճակի վրա: Եվ տվյալ դեպքում մենք գործ ունենք զենքերի հավասարության սկզբունքի խախտման հետ: Կողմերը պետք է արժանանան հավասար վերաբերմունքի՝ առանց թույլ տալու, որ մի կողմն օգտվի այնպիսի իրավունքից, որից մյուս կողմը չի օգտվում: Իսկ այն դեպքում, երբ երկու կողմին էլ հնարավորություն չի ընձեռվել ծանոթանալու գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններին, որոնք արդեն հասանելի են եղել դատարանին, մենք գործ ունենք մրցակցության սկզբունքի խախտման հետ¹²:

Վերը քննարկված՝ Եվրոպական դատարանի վճիռներից կարող ենք եզրակացնել, որ կողմերի հավասարությունը գործի քննության մինչդատական փուլում, հաշվի առնելով տարբեր պետությունների իրավական համակարգերի առանձնահատկությունները, չի դիտվում որպես պարտադիր պայման: Տվյալ դեպքում առավել կարևորվում է այն հանգամանքը, թե արդյոք ապահովվում է կողմերի հավասարությունն ու մրցակցությունը դատարանի առջև դատական քննության փուլում: Այսինքն՝ կան արդյոք այնպիսի կառուցակարգեր, երաշխիքներ, որոնք դատական քննության փուլում փոխհատուցում են կողմերի անհավասարությունն ու մրցակցության բացակայությունը մինչդատական փուլում:

Այս հարցի քննարկման համար նախ անդրադառնանք դատարանի կարգավիճակին: Ինչպես հայտնի է՝ մրցակցության սկզբունքի պար-

տադիր բաղադրատարրերից մեկն անկախ և անկողմնակալ դատարանի առկայությունն է¹³: Տարբեր իրավական համակարգերում և տեսական տարբեր վերլուծություններում մրցակցության ապահովումը կապվում է ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ դատարանի գոյության հետ: Մի դեպքում նշվում է, որ դատարանը պատասխանատվություն է կրում արդարադատության նպատակների նվաճման համար, ինչի կապակցությամբ ամեն անգամ պետք է միջամտի քրեական գործի քննության գործընթացին, երբ դա է պահանջում արդարադատության շահը¹⁴: Ըստ մեկ այլ դիրքորոշման՝ դատարանը պետք է խելամիտ ակտիվություն ցուցաբերի, դատարանի կողմից ապացույցներ հավաքելը պետք է ունենա որոշակի սահմաններ, ինչը պայմանավորված է դատավարության մրցակցային ոգով¹⁵: Քրեական դատավարության տեսության մեջ արտահայտված մեկ այլ տեսակետի համաձայն՝ մրցակցության էությունը կապված է արդարադատություն իրականացնող մարմնի պասսիվ դատավարական կարգավիճակի հետ: Մասնագիտական գրականության մեջ նույնիսկ կարելի է հանդիպել կարծիքի, թե՛ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելը, ինչպես նաև փորձագետին հարցեր առաջադրելն անհամատեղելի են մրցակցության հետ¹⁶:

Ժամանակակից հայկական դատավարագիտությունը, մրցակցության բեմահարթակում դատարանին ակտիվից բացի, տալիս է նաև ղեկավար դեր՝ ընդգծելով քրեական արդարադատության ասպարեզում նրա կարգավիճակի կարևորությունն ու բացառիկությունը¹⁷:

Այսպես՝ քր. դատ. օր-ի 23-րդ հոդվածի համաձայն՝ ...Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և ան-

¹² Տե՛ս Եվրոպական դատարանի *Niderost – Huber v. Swizerland* գործով 1997 թվականի փետրվարի 18-ի վճիռ, գանգատ թիվ 18990/91 21 կետ:

¹³ Տե՛ս Սիրակ Սաքալյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԵԴ/0058/01/10 որոշման 30-րդ կետը:

¹⁴ Տե՛ս Հ.Հ. Ղուկասյան, Մրցակցության գաղափարախոսությունը քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատարակ., 2014թ., էջ 74:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ Տե՛ս *Адамайтіс М. Суд не должен быть инициатором назначения экспертиз. Российская юстиция, 2002, N 12, էջ 1:*

¹⁷ Տե՛ս Հ.Հ. Ղուկասյան, Մրցակցության գաղափարախոսությունը քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատարակ., 2014թ., էջ 75:

կողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեադատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:

...Դատարանը, կողմի միջնորդությամբ, սույն օրենսգրքով սահմանված կարգով, աջակցում է նրան ձեռք բերելու անհրաժեշտ նյութեր:

Քանի որ սկզբունքում ամրագրված այս դրույթները իրականացվում են նախապատրաստական և հիմնական դատաքննության փուլերում, փորձենք վերլուծել քրեական դատավարության վերը նշված փուլերը՝ պարզելու համար՝ արդյոք դրանցում պարունակվում են այնպիսի կառուցակարգեր, որոնց հաշվին լրացվում է կողմերի մինչդատական փուլում առկա անհավասարությունը:

Քր. դատ. օր-ի 291-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան մուտք եղած քրեական գործը դատավորները սահմանված կարգով վարույթ են ընդունում, ինչի մասին կայացվում է որոշում:

Նույն օրենսգրքի 292-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում համապատասխան որոշում: Իսկ քր. դատ. օր-ի 293-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական քննությունը պետք է նշանակվի դատական քննություն նշանակվելու մասին որոշում կայացնելու պահից 10 օրվա ընթացքում:

Վերը մեջբերված հոդվածներից, ինչպես նկատեցինք, գործը դատարան մուտք լինելուց հետո 25 օրվա ընթացքում դատարանն ուսում-

նասիրում է գործի նյութերն ու մեղադրական եզրակացությունը, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննիչը, հանդես գալով մեղադրանքի կողմում, հազվադեպ է գործին կցում պաշտպանության կողմի ներկայացրած նյութերը (ինչն էլ գիտակցելով՝ պաշտպանության կողմը հաճախ մինչդատական վարույթի ընթացքում չի էլ ներկայացնում արդարացնող ապացույցները վարույթն իրականացնող մարմիններին և դրանք միանգամից ներկայացնում է դատարան) կամ մեղադրական ապացույցների հետ ներկայացնում նաև արդարացնող ապացույցներ՝ կարելի է ասել, որ այդ ամբողջ ընթացքում դատարանը ծանոթանում է մեղադրական գործին, մի կողմի ներկայացված տեսակետներին, ինչն էլ կամա, թե ակամա նրա մեջ առաջացնում է մեղադրական ուղղվածության հակում:

Վերը նշված փուլերի կարգավորմանն ուղղված հոդվածների հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում չկան ամրագրված այնպիսի կարգավորումներ (բացառությամբ 304-րդ հոդվածի 1-ին մասի, որը սահմանում է, որ պաշտպանը դատական քննությանը մասնակցելիս օգտվում է մեղադրողի հետ հավասար իրավունքներից), որոնք պաշտպանության կողմին քրեական գործի դատական քննության փուլից ի սկզբանե կտրամադրեն հավասար պայմաններ:

Այս առումով, եթե ուսումնասիրենք այլ պետությունների օրենսդրությունները, ապա դրանցում հնարավոր է նկատել այնպիսի կարգավորումներ, որոնցով ինչ-որ չափով լուծվում է վերը ներկայացված խնդիրը:

Այսպես՝ Բուլղարիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը (254 հոդված) նախատեսում է այնպիսի կարգավորում, որի համաձայն՝ բացառությամբ որոշ դեպքերի՝ մեղադրական եզրակացությունը նախքան դատարան ուղարկվելը ուղարկվում է նաև պաշտպանության կողմին, որին հնարավորություն է տրվում ներկայացնելու իր դիտողությունները, անհամաձայնությունը, կոնկրետ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը, որը մեղադրական եզրակացության հետ միաժամանակ ուղարկվում է դատարան:

Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (322-րդ հոդ-

վածի 6-րդ մաս, 330 հոդված) նախնական դատախոսների կարգավորմանը նվիրված հոդվածներում նշվում է, որ այդ դատախոսների ընթացքում որոշվում է այն անձանց ցուցակը, ովքեր ենթակա են ներկայացման դատարան: Նշվում է նաև, որ մեղադրանքի և պաշտպանության կողմերի վկաների ներկայացման ապահովումը կարող է դրվել կողմերից յուրաքանչյուրի վրա:

Ռումինիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ հիմնական դատախոսները սկսվում են բացման խոսքով, երբ հանրային մեղադրողի կողմից մեղադրանքի փաստական հիմքը և մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը ներկայացնելուց հետո պաշտպանության կողմին հնարավորություն է տրվում մեղադրանքի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու: Այս ընթացքում մեղադրյալը կարող է հայտնել իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը՝ կապված մեղադրանքի կամ դրա որոշ հատվածների հետ, ուշադրություն հրավիրել այն հանգամանքներին, որոնք վկայում են իր անմեղության մասին¹⁸:

Հաշվի առնելով դատարանի առջև կողմերի հավասարության կարևորությունը՝ գրականության մեջ բազմիցս արտահայտվել է այն տեսակետը, որի համաձայն՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել փաստաբանների կողմից փաստաբանական քննություն անցկացնելու հնարավորությունը: Այդպիսի կարգավորումների պարագայում փաստաբանները, որպես կանոն, դիմում են մասնավոր խուզարկուների օգնությանը: ԱՄՆ-ում, օրինակ՝ խուզարկուներն անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու հարցում ունեն լայն լիազորություններ: Նրանք օգտագործում են բազմաթիվ դատավարական գործիքներ, ինչպիսիք են՝ զննումը,

վկաներին և տուժողներին հարցման ենթարկելը, խուզարկություններ և առգրավումներ կատարելը և այլն: Դատավարական մեթոդների կիրառման ընթացքում ստացված փաստական տվյալները ներառվում են քրեական գործում՝ որպես ապացույցներ:

Դատավարության սկզբնական փուլում մրցակցության սկզբունքի կիրառմամբ պաշտպանը հնարավորություն է ունենում դատարանում օբյեկտիվ հիմնավորմամբ հակադրվելու մեղադրողին, և գործով ճշմարտությունը պարզելը դառնում է ավելի դյուրին¹⁹:

Մինչդատական քննության փուլում կողմերի անհավասար վիճակը դատական քննության փուլում ինչ-որ ձևով փոխհատուցելու և դատարանի առջև կողմերի հավասարությունն ապահովելու անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ որոշ հեղինակներ ներկայիս կարգավորումների պայմաններում առաջարկում են մեղադրական եզրակացության հետ միաժամանակ պաշտպանության կողմի կողմից պաշտպանական եզրակացության ուղարկումը դատարան²⁰: Այս հեղինակների առաջարկով՝ պաշտպանական եզրակացությունը պետք է պարտադիր տրամադրվի շահագրգիռ կողմերին, հրապարակվի դատական քննության սկզբում և հետագուտվի նույն պայմաններում, ինչ մեղադրական եզրակացությունը:

Այս առումով, եթե անդրադառնանք Նախագծում նախատեսված կարգավորումներին, անհրաժեշտ է նշել, որ թեև դրանում նույնպես նախատեսված չէ կողմերի լիակատար հավասարություն, սակայն դա պարունակում է այնպիսի կարգավորումներ, որոնք մասամբ լուծում են վերը քննարկվող հարցերը:

Այսպես՝ Նախագծի 21-րդ²¹ հոդվածով նախատեսված խնդիրների իրականացման համար, Նախագիծը ամրագրում է երեք ենթա-

¹⁸ Տե՛ս The Principle of equality of arms-Part of the right to fair trail Elisa Toma Legal Advisor S.C. UPC Romania S.R.L, էջ 6:

¹⁹ Տե՛ս Ա. Ղամբարյան Ապացուցման գործընթացում պաշտպանի կարգավիճակի կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Հայրապետ, 2015թ., էջ 17:

²⁰ Տե՛ս И. Трунов, Защитительное заключение адвоката <https://www.lawmix.ru/comm/2185>

²¹ Տե՛ս Նախագծի 21-րդ հոդվածը, որը սահմանում է, որ դատարանը, պահպանելով անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է բոլոր ապացույցների ներկայացման և համակողմանի հետազոտման համար անհրաժեշտ պայմաններ, դատարանի կողմի միջնորդությամբ, սույն օրենսգրքով սահմանված կարգով աջակցում է նրան՝ ձեռք բերելու անհրաժեշտ ապացույցներ, կողմերը դատարանում օժտված են իրենց դիրքորոշումը ներկայացնելու և պաշտպանելու հավասար հնարավորություններով, իսկ դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի ապացույցներ, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:

փուլ՝ նախնական դատալսումներ, հիմնական դատալսումներ և լրացուցիչ դատալսումներ:

Հաշվի առնելով, որ կողմերի դատավարական լիարժեք հավասարությունն անհրաժեշտ է ապահովել հենց դատաքննության նախապատրաստական փուլից, Նախագծով առաջարկվող կարգավորումներով հենց այս փուլում են որոշվում, մասնավորապես, հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, ինչպես նաև ապացույցների թույլատրելիության հարցերը:

Այսպես՝ Նախագծի 319-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախնական դատալսումների ընթացքում կողմերը դատարանի պահանջով ներկայացնում են հիմնական դատալսումներում հետազոտման ենթակա ապացույցների շրջանակի վերաբերյալ իրենց առաջարկները: Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է հիմնավորել, թե իր կողմից առաջարկված՝ հետազոտման ենթակա յուրաքանչյուր ապացույց վերդիկտ կայացնելու համար նշանակություն ունեցող ինչ փաստական հանգամանք է հաստատում կամ հերքում:

Ինչպես տեսնում ենք՝ նման կարգավորումը գրեթե չեզոքացնում է մինչդատական վարույթում մեղադրանքի և պաշտպանության կողմերի անհավասարությունը, քանի որ իրենց դիրքորոշումը հաստատող փաստական տվյալները նրանք ներկայացնում են հավասար մեկնարկային պայմաններում, ընդ որում՝ հիմնավորելով դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը տվյալ մեղադրանքին: Սա առաջին հերթին վերացնում է գործող օրենսդրության մեջ առկա այն անհավասարությունը, երբ դատախազի, այսպես կոչված՝ «դատակոչի ցուցակը» պարտադիր էր դատարանի համար, իսկ պաշտպանության կողմը պետք է կարողանար լրացուցիչ հիմնավորել իր ներկայացված ապացույցների հետազոտման անհրաժեշտությունը²²:

Փաստորեն, նախաքննության փուլում հավաքված բոլոր ապացույցները, այդ թվում և հատկապես մեղադրանքի կողմի ձեռք բերած փաստական տվյալները, դատարանի համար իրականում դառնում են ոչ պարտադիր և նրա կողմից որոշակի նախնական գնահատականի արժանանալու դեպքում միայն կարող են հավակնել դատական հետազոտման: Բացի այդ՝ այս փուլում սահմանված և հետազոտման ենթակա ապացույցների ծավալը վերջնական չէ և կարող է լրացվել հիմնական դատալսումների ընթացքում (Նախագծի 335 հոդված):

Բացի դրանից՝ Նախագիծն ամրագրում է մի կարևոր հանգամանք ևս, որը հիմնական դատալսումներում կողմերի հավասարության առաջին և կարևոր նախապայմաններից մեկն է: Այսպես՝ Նախագծի 324-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մեղադրողի բացման խոսքից հետո իր ցանկությամբ բացման խոսքով կարող է հանդես գալ նաև պաշտպանը կամ պաշտպանությունն ինքնուրույն իրականացնող մեղադրյալը: Այսինքն՝ հանրային մեղադրողի կողմից մեղադրանքի հիմքը և մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը ներկայացնելուց հետո պաշտպանության կողմը հնարավորություն է ստանում մեղադրանքի վերաբերյալ ներկայացնելու իր դիրքորոշումը:

Եզրափակելով վերոգրյալը՝ նշենք, որ, ինչպես նկատեցինք՝ թե՛ մրցակցությունը, թե՛ կողմերի հավասարությունը, որը կողմերի միջև մրցակցության կարևոր և անհրաժեշտ բաղադրատարր է, չափազանց կարևոր են գործի արդարացի և ճիշտ լուծման համար, հետևաբար՝ դատավարության առավել վաղ փուլերում դրանց կենսագործումն ապահովող մեխանիզմների հստակ ամրագրումը կնպաստի սույն պարագրաֆում քննարկված խնդիրների լուծմանը, ինչին էլ միտված են Նախագծի վերը ներկայացված և մի շարք այլ նոր մոտեցումները:

²² Տե՛ս Հ. Ղուկասյան, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատարակ., 2014թ. էջ 77:

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի երիտասարդական հիմնադրամ,
իրավաբան

**ՎՃՈՒՔԵԿ ԲՈՂՈՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ
ԿԱՅՄՉՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել դա թե՛ նորմաստեղծ և թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից՝ իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Սակայն այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն¹, այսինքն՝ նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն²:

ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 382-րդ հոդվածը հստակ սահմանում է այն իրավական հետևանքները, որոնք առաջանում

են վճռաբեկ բողոքի ձևին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները չպահպանելու դեպքում: Այսպես՝ նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է՝ 10 օրից մեկ ամիս ժամկետ տրամադրելով, եթե բողոքը չի համապատասխանում դատական վերանայման բողոքի բովանդակությանը կամ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմաններին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե բողոքը վճռաբեկ դատարանի սահմանած ժամկետում չի համապատասխանեցվել նախագծի դատական վերանայման բողոքի բովանդակությանը կամ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պահանջներին, բողոքը բերել է բողոքարկման իրավունք չունեցող անձը, բողոքը ժամկետանց է, և հարուցված լինելու դեպքում մերժվել է բողոքարկման բաց թողնված ժամկետի միջնորդությունը, բողոքը բերվել է այնպիսի ակտի դեմ, որը ենթակա չէ վճռաբեկ բողոքարկման:

Գործող օրենսգրքի 414.1 հոդվածը սահմանում է. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 407 հոդվածի պահանջներին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

- 1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է, 2) վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, ով վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չունի, 3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 106 2018

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշումը:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 09-ի ՍԴՈ-690 որոշումը:

կարգով, 4) վճարել բողոք ներկայացրած անձը մինչև վճարել բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը դիմում է ներկայացրել վճարել բողոքը հետ վերցնելու մասին, 5) բողոքում նշված հիմքով նույն գործով վճարել դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, 6) բողոքը բերվել է սույն օրենսգրքի 375.4 հոդվածի պահանջի խախտմամբ:

Բողոքն առանց քննության թողնելու առաջին հիմքի՝ վճարել բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է, վերաբերյալ Սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «...Եթե բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է անձից անկախ պատճառներով իրավունքի ուժով (ex jure), բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը: Միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձի համար երաշխավորված կլինի ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքը»:³ Երբ վճարել բողոքը վճարել դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճարել դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճարել դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով: Մինչույն ժամանակ՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ, մի կողմից՝ օրենսդրորեն օբյեկտիվորեն հնարա-

վոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դատական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն ամրագրել: Ոչ միասնական կամ հնարավոր հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար անհրաժեշտ այն չափանիշները կամ դատավարական ժամկետի վերականգնման հիմքերի այն մոտավոր ոչ սպառիչ շրջանակը, որոնք յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանան ժամկետի բացթողնման հարգելիությունը գնահատելիս:

Հետևաբար՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի տվյալ իրավահարաբերության արդյունավետության, ինչպես նաև դատարանների հանրային իրավական վարքագծի կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը⁴:

Նախագծի 382-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճարել բողոքի վարույթ ընդունումը մերժվում է, եթե վճարել դատարանը հանգում է միաձայն հետևության, որ վարույթ ընդունելու պայմանների հիմնավորումները բավարար չեն:

Թե գործող օրենսգրքով, թե՛ Նախագծով բողոքն ընդունվում է վարույթ, եթե համապատասխանում է վճարել բողոքի բովանդակային պահանջներին, բողոքին կցված են բողոքի պատճենը վարույթն իրականացրած դատարան և վարույթի մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը, և եթե վճարել դատարանը չի հանգում միաձայն հետևության, որ վարույթ ընդունելու պայմանների հիմնավորումները բավարար չեն:

Վճարել բողոքը վերադարձնելու կամ ա-

³ Տես ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի, թիվ 1052 որոշումը:

⁴ Տես ՀՀ Սահմանադրական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի, թիվ 1249 որոշումը:

ռանց քննության թողնելու մասին Վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին ներկայացնելու, իսկ վերստին չներկայացնելու դեպքում՝ վճռաբեկ դատարանի սահմանած ժամկետը լրանալու օրվանից:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և վարույթ ընդունելը մերժելու դեպքերում վճռաբեկ դատարանը կայացնում է համապատասխան որոշում բողոքը ստանալուց հետո եռամսյա ժամկետում: Եթե վճռաբեկ բողոքում վկայակոչված են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հետևյալ պայմանները՝ ստորադաս դատարանների՝ տարբեր վարույթներով առնվազն երկու դատական ակտերում միևնույն նորմը կիրառվել է իրար հակասող մեկնաբանությամբ, բողոքարկվող դատական ակտում կոնկրետ նորմին տրված մեկնաբանությունը (հիմնավորումը) հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը (հիմնավորումներին), բողոքարկվող դատական ակտում կոնկրետ նորմին տրված մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշման եզրակացության մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը, բողոքարկվող դատական ակտում կոնկրետ նորմին տրված մեկնաբանությունը (հիմնավորումը) հակասում է մեկ այլ վարույթով վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը (հիմնավորումներին), ապա վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վկայակոչված պայմանի բացակայությունը (Նախագծի 382-րդ հոդվածի 6-րդ մաս):

Քննարկվող հոդվածի շրջանակներում հիշատակման արժանի է նաև բողոքը վարույթ ընդունելը մերժելու (բողոքը վերադարձնելու) որոշման պատճառաբանության խնդիրը: Այս

խնդիրն անդրադարձել է ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով: Այսպես՝ 2009 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈ 818 իր որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք: Սակայն օրենքը պետք է հաշվի առնի, որ, ելնելով վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից, նա իր լիազորություններն առավել ամբողջական կկատարի, եթե վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման օրենսդրական պահանջ ներկայացվի: Նման մոտեցումը ոչ միայն լուրջ ներդրում կլինի դատական տվյալ ատյանի կողմից առավել ամբողջական նախադեպի ձեւավորման հարցում, այլ նաև էապես կնվազեցնի չհիմնավորված բողոքների քանակը և կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը»:

Կանտե դը Գոնին ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «Իրավունքի մատչելիությունը որպեսզի լինի արդյունավետ, անհատը պետք է ունենա հստակ, գործնական հնարավորություն՝ վիճարկելու ակտը, որն իր իրավունքների միջամտության առարկա է»⁵: Իսկ ակտը վիճարկելու համար կարևոր հանգամանք է դատական ակտի պատճառաբանված լինելը:

Դատական որոշումների պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու թե ինչն է դատարանը հանգել այս կամ այն հետևության, որ իրավանորմով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, քանի որ պատճառաբանվածությունը պահանջում է ոչ միայն հիմնավորված և համապատասխան որակ ունեցող դատական ակտերի առկայություն, այլև որոշակի այլ որակների ապահովում, որոնք դատական ակտը դարձնում են հանրությանը և մասնագիտական լսարանին հասանելի ու համոզիչ⁶:

Վճռաբեկ դատարանի որոշումների համար էլ ավելի կարևոր է պատճառաբանված լինելը, քանի որ վճռաբեկ դատարանի որոշումը, բացի բուն գործառույթից՝ արդարադատության

⁵ Տե՛ս ՄԻԵԴ-ի Cante de Goni v. Spain, գանգատ թիվ 55782/00, 2002 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռ:

⁶ Տե՛ս Դ. Ավետիսյան, Արդարադատության հրատապ հիմնախնդիրներ, դատական պատճառաբանում և դատական ակտի կազմում, Դատավորների միություն/ Գիտագործնական վերլուծություն, Երևան, Ասողիկ, 2013, էջ 243:

իրականացումից, պետք է նաև մյուս դատարանների համար իրավամեկնաբանողական բնույթ և նշանակություն ունենա:

Վճռաբեկ դատարանի որոշումը, պատճառաբանված լինելուց բացի, պետք է ապահովի օրենքի միատեսակ կիրառումը, ճիշտ մեկնաբանությունը և նպաստի իրավունքի զարգացմանը: Վճռաբեկ դատարանի յուրաքանչյուր որոշման մեջ պետք է ուրվագծված լինի օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու, իրավունքի զարգացմանը նպաստելու անհրաժեշտությունը, հստակ նախանշվի այն իրավական խնդիրը կամ խնդիրները որոնց լուծման համար վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել քննել տվյալ բողոքը:⁷

Դատական որոշումների պատճառաբանումը հիմնվում է ավելի լայն՝ Մարդու իրավունքների և ազատությունների մասին կոնվենցիայում ամրագրված հավասարության սկզբունքի վրա, որն անհատներին պաշտպանում է կամայականություններից: Տվյալ իրավունքը ներպետական մարմիններին չի պարտավորեցնում կողմերի ներկայացրած յուրաքանչյուր փաստարկի տրամադրել մանրակրկիտ պատասխան: Բայց, միևնույն ժամանակ՝ դատարանների պատասխանը պետք է լինի բավականին մանրակրկիտ՝ կողմի փաստական հանգամանքների կամ իրավունքի պահանջի վերաբերյալ: Որոշումների պատճառաբանման պահանջն արտացոլվել է նաև ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումներում:⁸

Կարծում ենք՝ նման մոտեցումն արդարացված է, քանի որ օրենսդիրը վճռաբեկ դատարանին չի օժտել չպատճառաբանված որոշում ընդունելու իրավունքով, քանի որ չպատճառաբանված դատական ակտերը ոչ միայն չեն կարող ապահովել դատական իշխանության և դատարանների կողմից կայացված դատական ակտերի նկատմամբ հանրության վստահությունը, այլև չպատճառաբանված, չհիմնավորված դատական ակտերը նսեմացնում են դատական իշխանության հեղինակությունը և խաթարում են արդարադատության բուն էությունը:⁹

Բովանդակային առումով՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին պատասխանն էլ պետք է լինի հիմնավորված: Հասկանալի է, որ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը մերժելու վերաբերյալ որոշումներին չեն կարող ներկայացվել պատճառաբանվածության այն չափանիշները, ինչ եզրափակիչ դատական ակտերին, քանի որ սրանք ունեն ընթացակարգային բնույթ: Այնուամենայնիվ, պետք է կարևորել արդարադատության կանխատեսելիությունը:

Նախագծով փորձ է արվել հնարավորինս սպառիչ կերպով հստակեցնել վճռաբեկ դատարանի որոշումների պատճառաբանվածության չափանիշները, բայց որքանով այս կարգավորումը կարող է արդյունավետ լինել, կբացահայտվի գործնականում դրա կիրառման արդյունքով:

Թե գործող օրենսդրության և թե՛ Նախագծի պայմաններում նույնպես որևէ դատավարական օրենք վճռաբեկ դատարանի գործնական էության լուծող որոշման պարտադիր տարր չի սահմանում կոնկրետ բողոքը վարույթ ընդունելու հիմքի պատճառաբանումը: Իսկ պրակտիկայում բողոքը վարույթ ընդունելու որոշման չպատճառաբանվածության հետ կապված քիչ չեն դժգոհությունները: Այդ դժգոհությունները կապված են այն հանգամանքի հետ, թե ինչու է վճռաբեկ դատարանը կոնկրետ բողոքն ընդունել իր վարույթ և ինչ հիմքով, քանի որ այս կարգավորումը դատավարության մասնակիցների մեջ կարող է հանգեցնել այն եզրահանգման, որ վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքները վարույթ է ընդունում կամայականորեն՝ վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պայմաններում կամ առանց վարույթ ընդունելու հիմքերի հարցի լուծման: Մինչդեռ, իրականում, բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման չպատճառաբանվածությունը կապված է վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության հետ, բացի այդ՝ վճռաբեկ դատարանն արդեն իսկ իր որոշման «Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգում-

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 244:

⁸ Տե՛ս Դ.Ավետիսյան, Վ.Ենգիբարյան Արդարադատության մատչելիության հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Ասողիկ» հրատ., 2013, էջ 78-79:

⁹ Տե՛ս ՀՀ արդարադատության խորհրդի 2011 թվականի հունիսի 24-ի թիվ ԱԽ-13-Ո-17 որոշումը:

ները» հատվածում հիմնավորում է տվյալ դատական ակտում առկա թերությունները, մեկնաբանում և լուծում տալիս դրանց: Այնուամենայնիվ, ցանկալի կլիներ, որ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումները ևս պատճառաբանվեին՝ անհարկի քննադատությունից խուսափելու նպատակով:

Վճռաբեկ դատարան բողոք բերած անձն իրավունք ունի միջնորդելու՝ հետ վերցնելու բողոքը մինչև վճռաբեկ դատարանում դատական նիստի սկսվելը, իսկ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու մասին որոշում է կայացվում վճռաբեկ դատարանի դատական նիստում: Հետևաբար՝ բողոք բերած անձն իրավունք ունի բողոքը հետ վերցնելու մինչև վճռաբեկ դատարանի կողմից օրենքով նախատեսված որոշումներից մեկի կայացումը: Այս դրույթի հետ կապված՝ Վճռաբեկ դատարանն իր 2009 թվա-

կանի հունիսի 2-ի որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը «...ՀՀ քրեադատավարական օրենքով վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված բողոքն այն բերած անձի կողմից հետ վերցնելու դատավարական կարգ նախատեսված չէ: Այս պայմաններում վճռաբեկ դատարանի որոշմամբ արդեն իսկ վարույթ ընդունած բողոքը հետ վերցնելու իրավական հնարավորություն ընձեռված չէ...»:¹⁰ Բացի այդ՝ դատարանը կարող է չբավարարել բողոքը հետ վերցնելու միջնորդությունը այլ հիմքով ևս, եթե բողոքի քննությունը հիմնարար նշանակություն ունի օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար:

Վճռաբեկ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, և որոշումը կայացման օրվանից ողջամիտ ժամկետում ուղարկվում է բողոք բերած անձին ու տվյալ վարույթի մասնակիցներին:



¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2009 թ. հունիսի 2-ի, թիվ ՀՅՔԴԴՅ/0109/01/08 <http://dataran.am/press/wp-content/uploads/2013/07/hator2.pdf>

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

«Օրենքը մեկնաբանողը դատավորն է, ով կարդում է դատավճիռը viva vore!»

Թ. Հոբո

Գաղտնիք չէ, որ քրեական օրենսգրքում կան գնահատողական կամ արժեքաբանական այնպիսի կատեգորիաներ, որոնց բովանդակությունն ամբողջությամբ պարզաբանված չէ որևէ իրավական ակտով, հետևաբար՝ կարող է տարբեր կերպ մեկնաբանվել իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով քրեական օրենսգրքի պահանջները և կոնկրետ գործի հանգամանքները²:

Գնահատողական կատեգորիա կամ տարր պարունակող նորմերի մեկնաբանության հիմնախնդիրն բազմիցս անդրադարձ է կատարվել քրեական իրավունք գիտության մեջ³, որտեղ փորձ է արվել կոնկրետություն ներմուծել գնահատողական տարրի մեկնաբանության մեջ, միաժամանակ՝ քննադատողական վերաբերմունք է դրսևորվել օրենսդրի նկատմամբ՝ ակնկալելով, որ ժամանակի ընթացքում նվազագույնի կհասցվի գնահատողական հատկանիշների առկայությունը քրեական օրենսգրքում:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում (այսուհետ՝ քր. օր.) առկա են այնպիսի գնահատողական կատեգորիաներ, ինչպիսիք են «չարամիտ», «պարբերաբար», «այլ ծանր հետևանքները», «այլ վնաս», «էական վնասը», «առանձին դաժանությունը», «անձնական այլ շահագրգռվածությունը» և այլն: Ընդ

որում՝ գնահատողական կատեգորիաների կարելի է հանդիպել քր. օր-ի ինչպես Ընդհանուր, այնպես էլ Հատուկ մասում:

Գնահատողական տարրեր են պարունակում նաև բաց թվարկում պարունակող նորմերը: Տեսությունն առաջարկում է բաց թվարկում պարունակող նորմերը մեկնաբանել *ajusdem generis* հնարքով⁴: Այդ հնարքի համաձայն՝ բաց թվարկման չորոշակիացված տարրի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ելնել որոշակիացված տարրերի բովանդակությունից, այսինքն՝ անորոշ տարրը պետք է ունենա այն ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են որոշակիացված տարրերին, այլ կերպ ասած՝ անորոշ և որոշակիացված տարրերը պետք է համասեռ լինեն: Օրինակ՝ քր. օր-ի 138 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը պատասխանատվության է նախատեսում բռնաբարության համար, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ *այլ ծանր հետևանքներ*: Տվյալ դեպքում առկա է բաց թվարկում պարունակող նորմ, որտեղ *այլ ծանր հետևանքները* գնահատողական է, ուստի դա մեկնաբանելու համար պետք է չափանիշ վերցնել որոշակի տարրը, տվյալ դեպքում՝ տուժողի մահը, իսկ որպես այլ ծանր հետևանք կարելի է համարել, օրինակ, տուժողի

¹ Viva vore՝ յուրաքանչյուր առանձին դեպքում: Նույնիսկ կարծիք կա, թե՛ Հոբոսի ուսմունքի հիման վրա կառուցվեց դատական նախադեպային իրավունքը: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Խաչատրյան, Օրենքի մեկնաբանման պատմությունից, Երևան, 2001թ., էջ 3-9:
² Տե՛ս В.Н. Кудрявцев, Общая теория квалификации преступления, М., 1972, էջ 135:
³ Առավել մանրամասն տե՛ս Н.С. Таганцев, П.И. Люблинский, Я.М. Фойницкий, В.Н. Кудрявцев, Я.М. Брайнин, М.И. Ковалева, А.В. Наумов, Е.А. Фролов, Н.Ф. Кузнецов.
⁴ Առավել մանրամասն տե՛ս Shapo, Helene at al., Writing and Analysis in law, New York, 2003, էջ 82:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 106 2018

առողջությանը ծանր վնաս պատճառելը: Քննարկենք մեկ այլ օրենսդրական կարգավորում. քր. օր-ի 35 հոդվածի համաձայն՝ հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը, դրանք հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով: Տվյալ հոդվածում ևս նախատեսված է բաց թվարկում պարունակող նորմ, որտեղ այլ պայմանները համարվում է գնահատողական, այսինքն՝ օրենսդիրը չի սահմանել այն կոնկրետ արարքները, որոնք պետք է գնահատել որպես նախապատրաստություն: Ի տարբերություն նախորդ հոդվածում առկա իրավակարգավորման՝ այս նորմի ձևակերպումից բխում է, որ տվյալ դեպքում անորոշ տարրը (այլ պայմանները) չպետք է որոշակիացվի որոշված տարրի (միջոցներ, գործիքներ ձեռք բերելը) հետ, քանի որ, Նորմատիվ իրավական ակտերի մասին 2018 թվականի ՀՀ օրենքի 16 հոդվածի 7-րդ կետի համաձայն, եթե նորմատիվ ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ: Այսինքն՝ տվյալ դեպքում իրավակիրառը կարող է ցանկացած հանգամանք գնահատել որպես նախապատրաստություն⁵, եթե նման հանգամանքներն այս կամ այն կերպ անհրաժեշտ և իրական նպաստավոր պայմաններ են ստեղծել հանցագործության կատարման համար, օրինակ՝ իրավակիրառ պրակտիկայում նախապատրաստական բնույթի արարքներ են համարվել խոչընդոտները նախապես վերացնելը, հանցակիցներ հավաքագրելը, հանցագործության վայր ժամանելը, զոհին հետապնդելը⁶ և այլն:

Գնահատողական կատեգորիաների առկայությունը քր. օր.-ում ունի թե՛ դրական և թե՛ բացասական կողմեր: Դրականն այն է, որ դրանց առկայությունը քր. օր-ին հաղորդում է ճկունություն, տարբեր հասարակական հարաբերությունները կարգավորելու լայն հնարավորություն է ստեղծում՝ միևնույն ժամանակ ապահովելով քրեական օրենքի ավելի փոքր ծավալը:

Որպես բացասական կողմ, թերևս, կարելի է առանձնացնել այն, որ գնահատողական տարրերի մեծ քանակությունը չի ապահովում օրենքի միատեսակ կիրառություն, հաճախ են առաջ գալիս դատական սխալներ, նորմի մեկնաբանությունը կախվածության մեջ է դրվում իրավակիրառի մասնագիտական պատրաստվածությունից, արժեքային համակարգից և այլ սուբյեկտիվ գործոններից:

Օրենքներում գնահատողական տարրերի առկայության առնչությամբ իրավական դիրքորոշում է հայտնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր՝ 2004 թվականի դեկտեմբերի 21 վճռում (Busuioc v. Moldova), մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի կողմից արձանագրվել է, որ, թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին, հետևաբար՝ շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր են: Հիշյալ դիրքորոշումը վերահաստատել է նաև Սահմանադրական դատարանը: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-747 և ՍԴՈ 780 որոշումներում դիրքորոշում է հայտնել, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքով, այլ՝ դատական պրակտիկայում:

Համամիտ լինելով ՄԻԵԴ-ի և Սահմանադրական դատարանի դիրքորոշման հետ՝ միաժամանակ կարծում ենք, որ, այնուամենայնիվ, նպատակահարմար է, որ որոշ առանցքային հասկացություններ սահմանված լինեն քրեական օրենսգրքում: Պատահական չէ, որ այդ ուղին է բռնել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը, որի հոդված 1-ում տրված են որոշ հասկացությունների սահմանումներ, որոնք, իհարկե, ոչ ամբողջությամբ, սակայն հնարավորինս կնպաստեն:

Համամիտ լինելով ՄԻԵԴ-ի և Սահմանադրական դատարանի դիրքորոշման հետ՝ միաժամանակ կարծում ենք, որ, այնուամենայնիվ, նպատակահարմար է, որ որոշ առանցքային հասկացություններ սահմանված լինեն քրեական օրենսգրքում: Պատահական չէ, որ այդ ուղին է բռնել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը, որի հոդված 1-ում տրված են որոշ հասկացությունների սահմանումներ, որոնք, իհարկե, ոչ ամբողջությամբ, սակայն հնարավորինս կնպաստեն:

⁵ Իհարկե բացառելով այն արարքները, որոնք հանցակազմի օբյեկտիվ կողմի մաս են կազմում:

⁶ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի որոշումը Դ. Ղամբարյանի և մյուսների վերաբերյալ:

տեն նորմի միատեսակ մեկնաբանությանը և կիրառությանը, մասնավորապես, ի տարբերություն գործող քր. օրի՝ նախագծով սահմանված են հետևյալ բնորոշումները՝ *անօգնական վիճակում գտնվող անձ, այլ ծանր հետևանք կամ այլ էական վնաս, առաջին անգամ հանցանք կատարած անձ, բռնություն, խաբեություն, մերձավոր, մերձավոր ազգական, շահադիտական դրդում, վիճակի խոցելիություն, վստահությունը չարաշահելը, հանցագործությունից տուժած անձ, հափշտակություն*: Օրինակ՝ որպես այլ ծանր հետևանք կամ այլ էական վնաս, ըստ նախագծի, պետք է համարել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածում կամ հոդվածի մասում թվարկված հետևանքներին համարժեք վտանգավորություն ներկայացնող հանգամանքներ: Սա ևս պարունակում է գնահատողական հատկանիշ, սակայն կարծում ենք, որ մասնակի հստակեցում կատարվել է այլ ծանր հետևանք կամ այլ ծանր վնաս գնահատողական հատկանիշների մեկնաբանման գործընթացում:

Գործող ՀՀ քր. օր-ում վերոհիշյալ կատեգորիաներից շատերը, ինչպես նաև մի շարք այլ կատեգորիաներ, շարունակում են մնալ գնահատողական, ինչն, անխոս, մի շարք դժվարություններ է ստեղծում իրավակիրառ պրակտիկայում: Այս համատեքստում օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու նկատառումներից ելնելով՝ էապես կարևորվում է դատարանների իրավական դիրքորոշումների նշանակությունը գնահատողական հատկանիշների մեկնաբանման գործընթացում:

Թեև ՀՀ Սահմանադրական դատարանի կարևոր առաքելությունն է Սահմանադրության գերակայությունն ապահովելը, սակայն օրենքի միատեսակ կիրառության գործընթացում պակաս կարևորություն չեն ներկայացնում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք տրված են Սահմանադրական դատարանի որոշումներում: «Սահմանադրական դատարանի մասին» 2018թ. հունվարի 17-ի ՀՀ օրենքի 61 հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տա-

րածքում: Քիչ չեն դեպքերը, երբ Սահմանադրական դատարանն այս կամ այն իրավական ակտերի հակասահմանադրական ճանաչելու կամ չճանաչելու որոշումներում մասամբ անդրադառնում է իրավական ակտերում առկա նորմերին՝ մեկնաբանելով դրանք: Դիցուք՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2018 թվականի փետրվարի 6-ին կայացված ՍԴՈ-1400 որոշման մեջ, անդրադառնալով քր. օր-ի 64 հոդվածում (Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը) առկա բացառիկ հանգամանքին որպես գնահատողական կատեգորիա, իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ եթե գործում առկա են պատիժը կամ պատասխանատվությունը մեղմացնող այնպիսի հանգամանքներ, որոնք խոչընդոտ են կալանք պատժատեսակի կիրառման համար, օրինակ՝ խնամքին մինչև 8 տարեկան երեխա ունենալը, և եթե քր. օր-ի հոդվածի սանկցիայում պատիժ է նախատեսված միայն կալանքի կամ ազատազրկման ձևով (դրանք թվով 24-ն են), ապա դատարանին ոչինչ չի մնում անելու, քան քր. օր-ի 64 հոդվածը կիրառելը: Ասվածից կարելի է հետևություն անել, որ անձի նկատմամբ միայն կալանք և ազատազրկում պարունակող սանկցիա կիրառելիս խնամքին մինչև 8 տարեկան երեխա ունենալը պետք է գնահատել բացառիկ հանգամանք՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի վերոնշյալ նկատառումները:

Օրենքների մեկնաբանման գործընթացում կարևոր առաքելություն ունի հատկապես ՀՀ վճռաբեկ դատարանը: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 171 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 29 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը: Ընդ որում՝ այդ առաքելությունն իրականացվում է, եթե տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաբանական հետևանքով:

Պետք է արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի դերը մեծ է գնահատողական հատկանիշների մեկնաբանման գործընթացում հատկապես օրենքի միատեսակ կիրառության ա-

ռաքելության իրականացման շրջանակներում, որի ապահովման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8 հոդվածի 4-րդ մասում սահմանված է հետևյալ դրույթը՝ նույնական փաստերով այլ գործով վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արդեն իսկ իր մի շարք նախադեպային որոշումներում հստակեցրել է քրեական օրենսգրքում առկա հանցակազմի՝ գնահատողական համարվող որոշ հատկանիշներ, ինչպիսիք են բռնությունը, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը, կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը⁷, էական վնասը⁸, խուլիզանական շարժառիթը⁹ և այլն:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նաև բաց թվարկում պարունակող նորմերին, մեծ մասամբ հստակություն է ներմուծել դրանց միատեսակ կիրառման համար: Օրինակ՝ քր. օր-ի 62 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն քր. օր-ի 62 հոդվածի 1-ին մասում, այսինքն՝ օրենսդիրը լայն հայեցողական լիազորություն է տվել դատարանին այս կամ այն հանգամանքը մեղմացնող գնահատելու հարցում: Թեև գնահատողական հանցակազմերով նորմերի մեկնաբանությունը կատարվում է դատական հայեցողության շրջանակներում, սակայն պետք է փաստել, որ այդ հայեցողությունը սահմանափակված է օրինականության, հիմնավորվածության, արդարացիության հատկանիշներով: Դատական հայեցողության վերաբերյալ ՄԻԵԴ-ն իր դիրքորոշումներն է ներկայացրել¹⁰, որոնք արտացոլվել են նաև՝ ՀՀ վճռաբեկ դա-

տարանի որոշումներում¹¹: Դատական հայեցողության շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ Պ. Բայրամյանի վերաբերյալ 2007 թվականին կայացրած որոշման մեջ իրավական դիրքորոշմամբ հստակեցրել է, որ քր. օր-ի 62 հոդվածով չնախատեսված այլ հանգամանք որպես մեղմացնող հանգամանք հաշվի առնելիս այդ հանգամանքը պետք է ողջամտորեն նվազեցնի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը: Նույն դիրքորոշումը վերահաստատվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք այլ որոշումներում¹²: Իսկ եթե հանգամանքը, որն էապես չի նվազեցնում անձի կամ արարքի հանրային վտանգավորությունը, և որը բնորոշ է բոլոր անձանց, մասնավորապես՝ նախկինում հանցանք չկատարելը, չի կարող գնահատվել որպես մեղմացնող հանգամանք¹³:

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից հնարավոր է նաև գնահատողական հատկանիշը տարբերել օրենսդրական բացից: Քր. օր-ի 238 հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում խոշոր չափերով իրազեն հափշտակելու համար: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Դ. Սիմիոյանի վերաբերյալ 2014 թվականին կայացրած որոշման մեջ իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ Եվրոպական դատարանի և վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից հետևում է բացարձակ կանոնն այն մասին, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը, ինչպես նաև այն, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի: Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով, այսինքն՝ տվյալ դեպքում «խոշոր վնասը» ոչ թե գնահատողական հատկանիշ է, այլ՝ օրենսդրական բաց:

⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի որոշումն Ա. Սահակյանի և Ծ. Սահակյանի վերաբերյալ:

⁸ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի որոշումը Վ. Պետրոսյանի վերաբերյալ:

⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի որոշումը Շ. Հախվերդյանի վերաբերյալ:

¹⁰ Տե՛ս *mutatis mutandis*, *Tyrer v. the United Kingdom* գործով 1978 թվականի վճիռը, *Seering v. the United Kingdom* գործով 1989 թվականի վճիռը:

¹¹ Տե՛ս, օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի որոշումը Հ. Դավթյանի վերաբերյալ:

¹² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի որոշումը Է. Պետրոսյանի և Վ. Էլոյանի վերաբերյալ, 2009 թվականի որոշումը Կ. Հայրապետյանի վերաբերյալ:

¹³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի որոշումն Է. Ստեփանյանի վերաբերյալ:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դերը ևս չի կարելի թերագնահատել գնահատողական հատկանիշների մեկնաբանության ընթացքում միատեսակ դատական պրակտիկա ձևավորելու տեսանկյունից, քանզի, ՀՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ընթացքում որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին: Հնարավոր է, որ մեկ հոդվածում պարունակվեն մի քանի գնահատողական հատկանիշներ, որոնք էլ ավելի են դժվարացնում այդ նորմի մեկնաբանությունը և կիրառությունը: Օրինակ՝ քր. օր-ի 308 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու կամ ծառայողական պարտականությունները չկատարելու համար՝ **շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից (ընդգծումը մերն է՝ Ա. Մ.)** ելնելով, որն **էական վնաս (ընդգծումը մերն է՝ Ա. Մ.)** է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը): Տվյալ դեպքում **շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունը, խմբային շահը** համարվում են որակական գնահատողական հատկանիշ, որի էությունը կապված է կոնկրետ քրեական գործով հանգամանքների առանձնահատկություններից: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի տարբեր դատարաններ, հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները, տարբեր կերպ են մեկնաբանել անձնական այլ շահագրգռվածություն գնահատողական հատկանիշը, մասնավորապես՝ որպես անձնական այլ շահագրգռվածություն են համարվել՝ լրացուցիչ ֆինանսավորում ստանալը, որոշակի անձանց համակրանքը շահելը, նրանց դժգոհությանը չարժանանալը, իր անձի նկատմամբ վատ համբավ չստեղծելը, ժամանակ և միջոց չծախսելը, ղեկավարության մեջ տպավորություն ստեղծելը, անձանց «աչքից չընկնելը»: Քր. օր-ի 308 հոդվածում առկա է նաև քանակական գնահատողական հատկանիշ՝ **էական վնասը**, որն ասելով՝ դատարանները գնահատել են իշխանության հեղինակագրկումը, հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության չենթարկելը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ տուժողի իրավունքներից օգտվելուց զրկելը, քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարումը, հանրակրթական դպրոցի աշխատանքի խաթարումը, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու և օրինական եկամուտ ստանալու իրավունքները խախտելը:

Այսպիսով՝ քրեական քաղաքականության արդյունավետ իրականացման նախապայմաններից է հիմնարար սկզբունքներին՝ օրինականությանը, օրենքի առջև հավասարությանը, արդարությանը, մարդասիրությանը անշեղորեն հետևելը: Այս սկզբունքներին անշեղորեն հետևելու համար կարևոր նշանակություն ունեն քրեական օրենսգրքում առկա գնահատողական հատկանիշների մեկնաբանությունը և կիրառությունը: Քր. օր-ի հոդվածների վերլուծությունը ցույց է տվել, որ գնատողական հատկանիշների թիվը զգալի է: Համամիտ լինելով այն մոտեցմանը, որ դրանց առկայությունն զգալիորեն դժվարացնում է իրավակիրառ պրակտիկան, միևնույն ժամանակ՝ պետք է փաստել, որ հնարավոր չէ իսպառ բացառել այդ հատկանիշների գոյությունը, քանի որ դրանք ապահովում են օրենքի ճկունությունը: Կարծում ենք, որ, գնահատողական հատկանիշներ պարունակող նորմերի միատեսակ կիրառման նկատառումներից ելնելով՝ ՀՀ դատարանների դերի մեծացման հետ զուգընթաց քր. օր-ում հնարավորինս պետք է նվազեցվի գնահատողական հատկանիշի առկայությունը, քանի որ դա պահանջում է քրեական օրենսգրքի առանձնահատկությունը, հատկապես՝ այն դեպքում, երբ գնահատողական հատկանիշի մեկնաբանության հետևանքով քրեորեն պատժելի արարքը կարող է վերածվել ոչ հանցավորի կամ հակառակը:

ԱՐՄԻՆԵ ՉՈՐԱՆՅԱՆ

ՀՀ փաստաբան

ՊԱՐՏԱԴԻՐ (ՀԱՐԿԱԴԻՐ) ՄԵԴԻԱՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված կարգով յուրաքանչյուր անձ իրավունք ունի իր իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով:

Մեդիացիան¹ արդի իրավական համակարգում զարգացել է 20-րդ դարի երկրորդ կեսերին ԱՄՆ-ում, իսկ ավելի ուշ իր տեղն է զբաղեցրել Անգլիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Նիդերլանդներում, Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում, Շվեյցարիայում և այլուր: Դա միջազգային վեճերի լուծման լավագույն մեթոդն է²:

Միջազգային փորձի համեմատությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում մեդիացիան գտնվում է զարգացման սկզբնական փուլում: Մինչդեռ զարգացած իրավական համակարգ ունեցող երկրներում մեդիացիան գործում է արդյունավետ և վիճող կողմերի համար ստեղծում է փոխզիջումային (բարենպաստ)

պայմաններ՝ հիմնականում հաշտությամբ ավարտելով վեճը:

2015 թվականից Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներում մեդիացիան (հաշտարարությունը) օրենսդրորեն իրավակարգավորվեց: Հիմնականում դա իրավական առումով արտացոլվեց ՀՀ ՔԴՕ նախկին օրենսգրքի 22.3 գլխում, նախկին ԴՕ-ում, որտեղ նախատեսվում էր նաև հաշտարարների արտոնագրման ինստիտուտը: Նման կարգավորում էր նախատեսվել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքում՝ որոշ աշխատանքային և ընտանեկան վեճերի կապակցությամբ (264-րդ հոդ. մաս 3⁵) և ՀՀ ընտանեկան օրենսգրքում (17-րդ հոդ. մաս 4⁶)³, սակայն վերը նշված ժամանակահատվածից առ այսօր մեդիացիան գործնականում չի կիրառվում, մինչդեռ դրա անհրաժեշտությունն առկա է քաղաքացիական գործեր քննող դատարաններին որոշակի գործերից բեռնաթափելու նպատակով⁴:

2018 թվականի փետրվարի 2-ին ընդունվեց «Քաղաքացիական դատավարության մա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 106 2018

¹ Mediation՝ լատիներեն բառ է, որը նշանակում է միջնորդություն: Դա չեզոք կողմի՝ մեդիատորի կամ միջնորդի (երրորդ անձի) մասնակցությամբ վեճի կարգավորում է, կողմերի միջև փոխզիջման (հաշտության) ձեռքբերում, բանակցությունների վարում, կողմերին հաշտեցման մղելուն ուղղված գործողություն: Մեդիացիան քաղաքացիաիրավական վեճերի լուծման այլընտրանքային եղանակ է: Այս ինստիտուտն իրավասու է քննելու ինչպես աշխատանքային, առևտրային, այնպես էլ ընտանեկան իրավահարաբերություններից բխող վեճեր:
² Մեդիացիայի ինստիտուտը գործում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Մեդիացիան որպես «միջնորդություն» հայտնի է դեռևս հին ժամանակներից, երբ մարդիկ թույլ են տվել իրենց միջև առաջացած վեճը, կոնֆլիկտը լուծելու երրորդ անձին՝ առանց ուժ գործադրելու նախապայմանի: Երրորդ անձը փնտրել և գտել է կողմերի կամքին համապատասխան փոխհամաձայնության տարբերակներ: Այս փաստը հետագայում եվրոպական մի շարք երկրներում ամրագրվեց և դարձավ վեճերի լուծման արտադատական եղանակ (դատարաններին այլընտրանք):
³ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 264-րդ հոդվածը լրացվել է 19.06.2015թ. ՀՕ-Ն օրենքով, տե՛ս ՀՀՊՏ 07.08.2015թ./42(1131): ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածը լրացվել է 19.06.2015թ. ՀՕ-78-Ն օրենքով, տե՛ս ՀՀՊՏ 07.08.2015թ./42(1131):
⁴ Հաշտարարության օրենսդրության ընդունումից հետո շուրջ երեք տարի դա, ըստ էության, պրակտիկ գործունեություն չի արձանագրում: Այսպես՝ 2016թ. օգոստոսի 11-ից սեպտեմբերի 3-ը Եվրոպայի խորհրդի պիլոտային ծրագրի շրջանակներում մեկնարկեց դատարանին կից հաշտարարության ծրագիր: Երեք շաբաթվա ընթացքում վեց հաշտարարի կամավոր նախաձեռնությամբ փորձ կատարվեց իրականացնելու 11 գործ, որից 7-ը լուծվել է հիմնականում հաշտության համաձայնությամբ: Սա փաստում է այն մասին, որ մեդիացիայի ինստիտուտի ներդրման հիմնական նպատակն է հնարավորինս նվազեցնել նոր հարուցվող գործերի ներհույսը դատական համակարգ, միևնույն ժամանակ՝ քաղաքացիներին հնարավորություն ընձեռել համապատասխան վեճերը կարգավորելու ավելի արագ, պարզ և քիչ ծախսատար եղանակով:

սին» ՀՀ նոր օրենսգիրքը, որտեղ հաշտարարությունը հիմնականում օրենսդրորեն ամրագրվել է «**ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**» վերտառությամբ (Գլուխ 19), բաղկացած 4 հոդվածից և «**ԱՐՏՈՆԱԳՐՎԱԾ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ**» վերտառությամբ (Գլուխ 39)՝ բաղկացած 4 հոդվածից, և համապատասխանաբար նույն օրենսգրքի տարբեր հոդվածներում:

Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարության գործընթաց նշանակելու և այդ կարգով կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու մասին դատավարական օրենսդրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

Գլուխ 19. ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Հոդված 184. Հաշտարարության և հաշտարարի նշանակումը հոդվածը բաղկացած է հինգ մասից, որտեղ ընդհանուր առմամբ ներկայացված է հաշտարարի կողմից գործունեություն իրականացնելու և դատարանի առաջարկով հաշտարարների ընտրության կարգը:

2. Հոդված 185. Հաշտարարության ժամկետը բաղկացած է մեկ մասից, որտեղ ներկայացվում է հաշտարարությամբ քննության ենթակա գործերի ժամկետը:

3. Հոդված 186. Հաշտարարության ավարտը բաղկացած է յոթ մասից, որտեղ ընդհանուր առմամբ ներկայացվում է հաշտարարության քննության ավարտը՝ տարբեր իրավիճակներից ելնելով:

4. Հոդված 187. Հաշտարարության հետ կապված ծախսերի բաշխումը բաղկացած է չորս մասից, որտեղ ամրագրված է հաշտարարության քննության հետ կապված դատական ծախսերի բաշխման կարգը:

Գլուխ 39. ԱՐՏՈՆԱԳՐՎԱԾ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ

1. Հոդված 288. Դիմում ներկայացնելը. բաղկացած է մեկ մասից, որտեղ ամրագրված է հաշտարարության արդյունքով ավարտված հաշտության համաձայնության հաստատման կարգը դատարանում:

2. Հոդված 289. Դիմումին առաջադրվող պահանջները. բաղկացած է երկու մասից, որտեղ ամրագրված են հաշտության համաձայնության հաստատման վերաբերյալ դատարանի դիմելու պահանջները:

3. Հոդված 290. Դիմումի քննությունը. բաղկացած է երկու մասից, որտեղ ամրագրված են հաշտության համաձայնության հաստատման վերաբերյալ ժամկետներին և հաշտության համաձայնությունը մերժելու հիմք հանդիսացող հանգամանքները բացառող փաստաթղթերի պահանջները:

4. Հոդված 291. Դատարանի վճիռը. բաղկացած է երեք մասից, որտեղ ամրագրված է հաշտության համաձայնության հաստատման կամ մերժման մասին կարգը:

Նշենք, որ արդեն լրացել է երեք տարին, ինչ հաշտարարությունը ձեռք է բերել իրավական կարգավիճակ, սակայն այդքան էլ իրավակիրառ մարմինների ուշադրության կենտրոնում չի գտնվում: Ավելին՝ անհրաժեշտ գործերը, որոնք ընդդատյա են մեղիացիայի ինստիտուտին, այդպես էլ դրական արձագանք չեն ստանում, այսինքն՝ մեղիացիայի միջոցով պրակտիկ գործեր առկա չեն: Մինչդեռ եվրոպական զարգացած իրավական համակարգ ունեցող երկրներում մեղիացիան գործում է բավականին արդյունավետ:

Կարծում ենք, որ մեղիացիայի ինստիտուտի կայացման համար Հայաստանի Հանրապետությունը դեռևս պետք է շարունակի ուսումնասիրել միջազգային փորձը, որպեսզի գործնականում կյանքի կոչվեն վերը նշված ինստիտուտի կիրառման նախադրյալները:

Մեղիացիայի հիմնական էությունը երկողմ համաձայնությամբ վեճը լուծելուն ուղղված քայլերն են: Մեղիացիան հիմնվում է կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության և համագործակցության, մեղիատորի անկողմնակալության ու անկախության սկզբունքների կիրառման իրավական կարգավորման վրա:

Մեղիացիան, ըստ էության, կամավոր գործընթաց է: Սակայն, ուսումնասիրելով տարբեր զարգացած իրավական համակարգ ունեցող երկրների փորձը, համոզվում ենք, որ մի շարք երկրներում գործում է ինչպես կամավոր, այնպես էլ պարտադիր մեղիացիա:

Այսպես՝ մեդիացիայի ճանաչողականությունը տարածելու հիմնական ձևերից մեկը որոշ հեղինակներ համարում են **պարտադիր** (հարկադիր) **մեդիացիան**⁵: Դա չի հակասում միջազգային չափորոշիչներին և չի հակասում N2008/52/EC Եվրախորհրդարանի ու Եվրամիության «Քաղաքացիական և առևտրային հարցերի կարգավորման (մեդիացիայի) մի քանի ասպեկտ» դիրեկտիվին, որն ընդունվել է 2008 թվականի մայիսի 21-ին Ստրասբուրգում⁶: Վերջինս համարվում է արդյունավետ միջոց հասարակության լայն շրջանակներին իրազեկելու և սերմանելու, որպեսզի վեճը լուծվի պարտադիր մեդիացիայի միջոցով:

Որքանով է արդյունավետ պարտադիր մեդիացիան:

Ուսումնասիրելով եվրոպական մի շարք երկրների, այդ թվում՝ Իտալիայի, Ռումինիայի փորձը, համոզմունք է ձևավորվում, որ պարտադիր (հարկադիր) մեդիացիան գործում է բավականին ճկուն:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հաշտարարությունը դիտարկվում է որպես կամավոր գործընթաց: Այսինքն՝ կողմերը կարող են կամավոր դիմել իրենց նախընտրած հաշտարարներին՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ գործը դատական փուլում է գտնվում, թե ոչ: Եվ այս սկզբունքը գործում է նաև օրենքով սահմանված կարգով: Վերջին դեպքում դատական նիստի ընթացքում դատարանը կողմերին առաջարկում է գործի քննությունն իրականացնել մեդիացիայի միջոցով՝ կողմերին պարզաբանելով մեդիացիայի էությունը և բնույթը: Կողմերը հաշտարարների ընտրության առումով ազատ են, տվյալ դեպքում՝ գործը քննող դատավորը կողմերին ներկայացնում է նաև հաշտարարների ընտրության կարգը: Սակայն նրանց կողմից բացասական պատասխանի դեպքում շարու-

նակվում է գործի քննությունը դատական կարգով: Այսինքն՝ օրենսդիրը կարգավորել է մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման պայմանագրով նախատեսված արտադատական կարգը՝ վեճի լուծումն արբիտրաժի կամ մեդիացիայի միջոցով. իհարկե, պայմանագրում հղում կատարելով նշված ինստիտուտներից որևէ մեկին: Եթե նույն վեճը չի կարգավորվում արտադատական կարգով, ապա կողմերը կարող են վեճը հանձնել առաջին ատյանի դատարանի քննությանը:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ, կարծես թե, Հայաստանի հանրությունը չի վստահում մեդիացիայի ինստիտուտին կամ էլ առաջարկված արտոնագրված հաշտարարներին: Պատճառն այն է, որ դատական որոշումը, որն ունի պարտադիր իրավական ուժ, վեճերի լուծման միակ հնարավոր տարբերակն է: Մինչդեռ պարտադիր (հարկադիր) մեդիացիայի կիրառումը թույլ կտա ոչ միայն արդյունավետ լուծել քաղաքացիաիրավական վեճերը, այլև քաղաքացիական գործեր քննող դատարաններին բեռնաթափել անհարկի ծանրաբեռնվածությունից:

Ուսումնասիրելով միջազգային իրավաբանական գրականությունը և միջազգային երկրների փորձը՝ համոզվում ենք, որ Չինաստանում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Ռումինիայում և այլուր պարտադիր (հարկադիր) մեդիացիայի ինստիտուտը գործում է: Օրինակ՝ Իտալիայում⁷ պարտադիր մեդիացիան իր հերթին բաժանվում է երեք տեսակի. Առաջին՝ հարկադիր մեդիացիան կիրառվում է հատուկ վարույթի գործերի դեպքում, ինչն ամրագրված է օրենքով, երկրորդ՝ պարտադիր մեդիացիան իրականացվում է գործը քննող դատավորի ցուցումով (դատական նիստի նախապատրաստական փուլում), երրորդ՝ կողմերն անպայմանորեն պետք է իրականացնեն հաշտարարական

⁵ Այս տեսակի մեդիացիան ունի վաղ պատմություն: Դա հարյուրավոր տարիներ առաջ լայնորեն կիրառվել է Չինաստանի և Ասիայի Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի բոլոր երկրներում: Ներկայումս այնպիսի հզորագույն երկրներում, ինչպիսիք են Չինաստանը և Ճապոնիան, որպես առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման միջոց՝ կիրառվում է մեդիացիան, որովհետև այս երկրներում մեդիացիոն կարգով վեճերի լուծումն արագ է և քիչ ծախսատար է, ուստի դատարան դիմելը համարվում է ոչ խրախուսելի:

⁶ Տե՛ս Директива N2008/52/EC Եվրախորհրդարանի ու Եվրամիության «Քաղաքացիական և առևտրային հարցերի կարգավորման (մեդիացիայի) մի քանի ասպեկտ» դիրեկտիվը: Էլ. հասցե. հասանելի է: <http://http://www.mediain.com/files/Documents/Directive-2008-rus.pdf>. – այց. 15.02.2017թ.:

⁷ 2009 թվականին Իտալիայի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունել է թիվ 69/2009 օրենքը i/18 հունիսի, 2009 թվական/, որի հիման վրա Իտալիայի օրենսդրությունը համապատասխանեցվել է ԵՄ կանոնակարգերին:

գործընթաց, եթե նրանք այդ մասին կնքել են համաձայնագիր, 2011 թվականի մարտի 21-ից Իտալիայում և ապա Ռումինիայում գործի դրվեցին պարտադիր հաշտարարության ինստիտուտը, ըստ որոնց՝ քննվում են հիմնականում քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող վեճեր (գույքային իրավունքներին վերաբերող բոլոր վեճերը, ժառանգության, ամուսնաընտանեկան և այլն): Ըստ Իտալիայի փորձի՝ դատարան դիմելու մտադրություն ունեցող կողմը նախապես պետք է համապատասխան փորձեր իրականացնի՝ հաշտարարության դիմելու նպատակով: Հայցադիմումի հետ դատարանին պետք է տրամադրվի փաստաթուղթ՝ հաշտարարի կողմից ստորագրված ձևաթուղթ, հետագայում վեճը դատական կարգով քննելու վերապահումով: Նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ վեճը գտնվում է դատաքննության փուլում և ենթակա է պարտադիր հաշտարարության, կողմը միշտ էլ կարող է դիմել դատարան՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու խնդրանքով⁸:

Գերմանիայում նույնպես գործում է պարտադիր մեդիացիա: Այստեղ գործը քննող դատավորը դատական նիստի նախապատրաստական փուլում անմիջապես կողմերին ուղարկում է պարտադիր մեդիացիայի:

Անգլիայում հիմնականում գործում է կամավոր մեդիացիան: Դատական գործընթացի ժամանակ դատարանը, ելնելով գործի բնույթից, կողմերին, այնուհանդերձ, դիմում է մեդիացիա իրականացնելու առաջարկով և նրանցից բացասական պատասխան ստանալու դեպքում շարունակում է գործի քննությունը: Սակայն այստեղ նույնպես մեդիացիան գործում է բավականաչափ արդյունավետ: Ըստ վիճակագրական տվյալների՝ Անգլիայում վեճերի 87%-ը⁹ լուծվում է արտադատական կարգով, և միայն մնացած 13%-ը՝ դատական:

ԱՄՆում ներկայումս վեճերի 95%-ը լուծվում է արտադատական կարգով, իսկ մնացած 5%-ը՝ դատական կարգով:

Կանադայում (Մանիտոբե, Օնտարիո և այ-

լուր), նույնպես գործում է պարտադիր մեդիացիան: Կանադայի օրենսդրության համաձայն՝ մեդիացիոն գործողություններ իրականացնելու համար կողմերն անպայմանորեն պետք է ներգրավվեն:

Պրակտիկան ցույց է տալիս, որ միշտ չէ, որ կողմերն իրենց վեճը լուծում են փոխհամաձայնեցված կարգով: Այսպիսի դեպքերում, օրինակ, Կանադայում կողմերի միջև անհամաձայնության հետևանքով մեդիատորը հատուկ ակտի տեսքով գրավոր փաստաթուղթ է կազմում, որը կարող է ներկայացնել դատարան՝ ավարտ հայտարարելով մեդիացիոն գործընթացին, այդպիսով բավարարելով կողմերից մեկի պահանջը և անհրաժեշտության դեպքում սանկցիա կիրառել կողմերից մեկի նկատմամբ:

Պետք է նշել, որ պարտադիր մեդիացիայի կիրառման կողմնակիցներ կան նաև ռուս իրավաբան-գիտնականների մոտ:

Մեր կարծիքով՝ ժամանակակից պայմաններում պարտադիր մեդիացիայի ինստիտուտի ներդրումն անհրաժեշտ է նաև Հայաստանի Հանրապետությունում, քանի որ իրատեսական է և կնպաստի ինչպես դատարաններին որոշակի գործերից բեռնաթափելու, այնպես էլ հանրությանը այդ կարգին իրազեկելու առումով:

Մեր կարծիքով՝ Հայաստանի Հանրապետությունում հասունացել է վեճերի լուծման այլընտրանքային եղանակների ներդրման, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված եղանակների կատարելագործման, դրանց կիրառման համար անհրաժեշտ իրավական և սոցիալ-տնտեսական պայմանների ապահովման և առկա խնդիրների լուծման հարցը: Իրավական կարգավորումը դեռևս չի նշանակում, որ վերը նշված ինստիտուտի ներդրումն ապահովված է: Խնդիրը գործնականում առկա է, և դրա համար անհրաժեշտ քայլեր են պահանջվում:

Որպեսզի մեդիացիան արդյունավետ գործի, նախ և առաջ՝ քաղաքացին պետք է իրազեկ լինի մեդիացիայի բուն էության և առավե-

⁸ Պարտադիր հաշտարարության կիրառման պատճառներով 2010 թվականի մարտի 16-ին Հռոմում գործադուլ էր իրականացվել պարտադիր մեդիացիայի մասին դրույթը հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ: Սակայն երկարատև քննարկումների շնորհիվ դա, իհարկե, կիրառվում է կողմերի ցանկությունը հաշվի առնելու պարագայում:

⁹ Տես Օ развитии медиации и примирительных процедур с участием посредника // Евро-Азиатская ассоциация медиаторов. Էլ. հասցե URL: <http://www.mediatorural..ru/mediacia.php?chapter=mediacia> (մուտք՝ 09.12.2015թ.)

լրությունների մասին, ինչը կարելի է տարածել սոցիալական գովազդների միջոցով: Երկրորդ՝ պարտադիր մեդիացիա կարող է իրականացվել՝ բացառապես կողմերի ցանկությունը հաշվի առնելով¹⁰:

Առաջարկում ենք՝ 1. Օրենսդրորեն ամրագրել և ավելացնել պարտադիր մեդիացիայի մասին հետևյալ դրույթը. «ՀՀ Դատական նիստի նախապատրաստական փուլում կողմերին ծանոթացնել պարտադիր մեդիացիայի էության և գործընթացի մասին և գործն ուղարկել պարտադիր մեդիացիայի»: 2. «Օրենսդրորեն սահմանել այն գործերի տեսակները, որոնք պարտադիր կարգով կարող են իրականացվել հաշտարարության միջոցով»:

Դրանք են՝

1. ամուսնալուծման և անհամաձայնության իրավահարաբերություններից բխող գործերը,
2. ալիմենտային իրավահարաբերություններից բխող գործերը,
3. երեխային տեսակցության կարգ նշանակելու մասին գործերը,
4. համատեղ սեփականության իրավունքին վերաբերող գործերը,
5. գույքային իրավունքներին վերաբերող վեճերը¹¹:

Հաշտարարություն իրականացնելու դեպքում առաջին չորս ժամն անվճար է, ինչը նախատեսում է ՀՀ ՔԴՕ 184-րդ հոդվածի 2-րդ մասը, և շատ հնարավոր է, որ նշված ժամանակահատվածում կողմերը ձեռք բերեն փոխհամաձայնություն: Տվյալ դեպքում՝ հաշտության համաձայնություն կնքվելու հիմքով գործի վարույթը կարճվում է, իսկ հաշտարարության հետ կապված ծախսերը կողմերը կրում են հավասարաչափ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Այն դեպքում, երբ հաշտարարությունը նշանակված է դատարա-

նի կողմից, և կողմերը դատարանի կողմից հաշտարարության համար սահմանված ժամկետում կնքում են հաշտության համաձայնություն, վճարված պետական տուրքը վերադարձվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

Մեդիացիայի ինստիտուտի արդյունավետ իրականացման համար դատարաններին որոշակի գործերի ծանրաբեռնվածությունից բեռնաթափելու նպատակով առաջարկում ենք նաև հետևյալը՝

1. Գործի քննության նախնական դատական նիստի փուլում կողմերին ծանոթացնել մեդիացիայի էության, գործառույթների և ընթացակարգի մասին և համապատասխան գործը պարտադիր կարգով ուղարկել կողմերի ընտրած արտոնագրված հաշտարարին, իսկ այն դեպքում, երբ կողմերը չեն ընտրում կամ չեն կողմնորոշվում ընտրելու արտոնագրված հաշտարար, ապա հաշտարարություն նշանակվում է դատարանի նախաձեռնությամբ¹²:

Կարծում ենք, որ հայց ներկայացնելու պահին, մինչև գործը դատավորին մակագրելը, դատարանի գրասենյակի աշխատակիցները նույնպես կարող են կողմերին իրազեկել, տեղեկացնել հաշտարարության ինստիտուտի բուն գործընթացի մասին:

Այսպես՝ եթե հայց ներկայացնողը համաձայնվում է հաշտարարության միջոցով անցկացնել գործի քննությունը, ապա նա պետք է հաշտարարին ուղղված դիմումը երկու օրինակից ներկայացնի դատարան: Դրա մեկ օրինակը պետք է կցվի հայցին, իսկ երկրորդ օրինակը տրամադրվի հաշտարարին (մեդիատորին): Այս առաջարկը ևս կօգնի խնդիրը լուծել, ինչի շնորհիվ կիրականացվի ինչպես հաշտարարու-

¹⁰ Քաղաքացիները վստահում են դատարաններին, քանի որ նրանք գործում են օրենքով նախատեսված կարգով: Իսկ պարտադիր մեդիացիայի կիրառման պարագայում, հատկապես՝ երբ դատավորն է առաջարկում (ոչ թե հայեցողական, այլ՝ օրենքով սահմանված դրույթով), այս դեպքում որոշակի վստահություն կառաջանա կողմերի մեջ, և նրանք վստահաբար կդիմեն մեդիատորին: Այստեղ խիստ կարևոր է նաև հաշտարարների կրթությունը, աշխատանքային փորձը և գիտելիքների իմացությունը: Սա առանձին թեմա է, որին կանդիդատները հետագա աշխատանքներում:

¹¹ Պարտադիր մեդիացիայի միջոցով կարող են իրականացվել նաև անհատական որոշ աշխատանքային, վարչական և հարկային գործերով վեճեր, որոնց մասին կխոսենք մեկ այլ աշխատանքում:

¹² Հայաստանի Հանրապետությունում Արդարադատության նախարարության պետոնեստրի ցանկում գրանցված են թվով 50 հաշտարար, որոնց ընտրում են այբբենական հերթականությամբ, կամ ընտրվում են (ինչը շատ կարևոր է,) տվյալ գործին առնչվող անհրաժեշտ գիտելիքներ և աշխատանքային փորձ ունեցող հաշտարար (ներ):

թյունը, այնպես էլ վերջինիս գործունեության մասին կիրազեկվեն ՀՀ քաղաքացիները:

Այսպիսով.

1. Մինչև հայցադիմումը վարույթ ընդունելը, հետևաբար՝ մինչև կողմերի դատարան ներկայանալը հնարավոր է, որ նշանակված դատական նիստի ժամանակ արդեն առկա լինի կողմերի միջև կնքված ինչպես մեղիացիայի մասին համաձայնագիրը, այնպես էլ համապատասխան գործողությունների հետևանքով նրանց միջև կնքված հաշտության համաձայնությունը, որը և հաստատում է դատարանը:

2. Երբեմն կողմերը, տարբեր պատճառներից ելնելով, հաշտարարին կարող են դիմել բավական ուշ, օրինակ՝ փորձաքննության անցկացման, մասնագետի խորհրդատվություն ստանալու, վկաների մասնակցությունն ապահովելու և այլ դեպքերում: Խնայելով ի-

րենց ժամանակը՝ նրանք հաշտարարին կարող են դիմել մինչև վերը նշված գործընթացներն իրականացնելը՝ ժամանակի հետ խնայելով նաև գումար:

3. Եթե կողմերը, այնուամենայնիվ, հաշտարարության գործընթացի փուլում չեն գալիս համաձայնության, ապա դատարանը գործի քննությունը կարող է իրականացնել հաշտարարի ներկայացրած փաստաթղթերի (հաշտարարությամբ ընթացող ամբողջ փաթեթը) հիման վրա՝ առանց հերթական նիստերի նշանակման: Այս դեպքում դատական գործընթացը ժամանակատար, ծախսատար բնույթ չի ունենա:

Վերը նշվածը համարվում է դատարանին կից մեղիացիա, այսինքն՝ պարտադիր (հարկադիր հաշտարարություն), որն էլ առաջացնում է իրավաբանորեն ամրագրված հետևանքներ:



THE LEGALITY OF MUSLIM BAN IN RELATIONS OF ACCESS TO TERRITORY AND SEEKING ASYLUM UNDER PUBLIC INTERNATIONAL LAW

The nature of obligations of states in relation to granting asylum and access to territory procedures under relevant treaties

Throughout the 20th century, the international community gathered a series of guidelines, laws and treaties to ensure proper treatment of refugees and protect their human rights¹.

The process began under the League of Nations in 1921². In July 1951, a diplomatic conference in Geneva adopted the Convention relating to the Status of Refugees ('1951 Convention'), which was later amended by the 1967 Protocol³. These documents clearly spell out who is a refugee and the kind of legal protection, other assistance and social rights a refugee is entitled to receive. It also defines a refugee's obligations to host countries and specifies certain categories of people, such as war criminals, who do not qualify for refugee status.⁴ Initially, the 1951 Convention was more or less limited to protecting European refugees in the aftermath of World War II, but the 1967 Protocol expanded its scope as the problem of displacement spread around the world. These two documents, which enjoy near universal ratification, define "a refugee" as a person owing to well-founded fear of being persecuted for reasons of race, religion, nationality, membership of a particular social group or political opinion, is outside

the country of his nationality and is unable or, owing to such fear, is unwilling to avail himself of the protection of that country; or who, not having a nationality and being outside the country of his former habitual residence as a result of such events, is unable or, owing to such fear, is unwilling to return to it.

All above mentioned elements should be considered in the process of granting asylum. However, some worrying trends have begun to emerge because of changed nature of conflicts and effects of globalization⁵. Many states have tried to limit their responsibilities towards refugees. Debates are being continued about which states and how they should provide refugee protection. Nevertheless, they have taken on a new dimension, as states are trying to explore proposals how to improve refugee protection and to control refugee movement.⁶ Part of the difficulties encountered by refugees' lies in the obvious gap between the existence of a right to asylum and the lack of a corresponding state duty to grant asylum. The 1951 Refugee Convention does not make any mention of a duty of any State to grant asylum.⁷ The provisions of international law, in element, are to the effect that States possess a "right" and not a "duty" to grant asylum. Several international attempts were made to formulate clear legal pro-

¹ See UNHCR, The 1951 Convention Relating to the Status of Refugees and its 1967 Protocol, September, 2011 <http://www.unhcr.org/4ec262df9.pdf>

² See Gilbert Jaeger On the History of the International Protection of Refugees, September 2001 Vol. 83 No 843 https://www.icrc.org/eng/assets/files/other/727_738_jaeger.pdf

³ See Guy.S.Goodwin-Gill, Convention Relating to The Status of Refugees, <http://legal.un.org/avl/ha/prsr/prsr.html>

⁴ Ibid

⁵ See Kate Jastram and Ms. Marilyn Achiron, Refugee Protection: A Guideline to International Refugee Law http://www.ipu.org/pdf/publications/refugee_en.pdf

⁶ See Catherine Phuong Identifying States' Responsibilities towards Refugees and Asylum Seekers, available at <http://www.esil-sedi.eu/sites/default/files/Phuong.PDF>

⁷ Ibid

Հողվածը գրվել է 1907 թվականին և առաջնահերթ վերաբերել է Միացյալ Նահանգներին: Ինչ վերաբերում է Անգլիայի իրավական համակարգին՝ հնարավոր է հավաստել, որ առաջին և նույնիսկ երկրորդ վարկածներն ընդունվել են ժամանակի ընթացքում:

Մեկ ստատուտային դրույթի գործոնները կարող են օգտագործվել որպես եզրակացության հիմք այլ ստատուտի դրույթի կառուցվածքի համար: Համանմանությամբ հիմնավորված օրենսդրական նորարարությունները եր-

բեմն ամբողջությամբ ընդունվում են օրենքի մեջ: Սակայն հնարավոր է նշել մի շարք դեպքեր, որտեղ սա տեղի չի ունեցել: Գոյություն չունի համոզիչ պատճառ, թե ինչու համանմանության ուժի գերակայությունը պետք է միշտ վերագրվի օրենսդրությանը:

Վերը նշված հողվածի հեղինակը դա դիտարկում է որպես հետագա, ընդհանուր և առավել անմիջական կամահայտնություն, և այսպիսով՝ համարում է, որ դա պետք է հիմնավորվի համանմանությամբ, և նախապատվություն տրվի հետևյալին՝ դատավորն ստեղծում է օրենք միևնույն առարկայի նկատմամբ: Սակայն նշվածը կենթարկվի ձախողման, քանի որ այստեղ հաշվի չի առնվել այն փաստը, որ համանմանության ուժը լիովին տարբեր է:

Օրենսդրությունը, անշուշտ, նախադեպային իրավունքին գերակայում է միայն այս առումով, երբ առկա են այդ երկու մրցակցող աղբյուրների հավասար ուժերի համանմանությունները, սակայն այս իրավիճակն առաջանում է հազվադեպ, և Անգլիայի դատավորները հաշվի չեն առնում դա⁹:

Հարկ է տարբերակել ներկա, այսինքն՝ գործող իրավունքը, որը դատարանը պարտավոր է կիրառել որպես հետևողական ամբողջություն, և պատմական ընդհանուր իրավունքը, որը համանմանության և դոկտրինայի հիմնավորմամբ սկզբունքների զարգացող աղբյուր է: Այս դեպքում գործող իրավունքը կարող է մեկնաբանվել շատ անգամներ: Ինչ վերաբերում է ներկայումս գործող իրավունքին՝ եթե ընդհանուր իրավունքի որևէ առաջարկություն ուղղակիորեն հակասում է խորհրդարանական առաջարկությանը, ապա կորցնում է իր վավերականությունը:

Պատմական տեսանկյունից՝ ընդհանուր իրավունքում պարունակվող սկզբունքների մասին լայնածավալ հայտարարություններն առ այն, որ հայեցակարգային սահմանումները կամ առանձին պարտականությունների և իրավունքների ընդարձակ ձևակերպումներն անժամկետ են, ձեռք են բերում էլ առավել կարևոր նշանակություն: Օրենսդրությունը կարող է զգալի դեր ունենալ այս զարգացող գործընթացում, քանի որ ակնհայտորեն հիմնված է այնպիսի նորմա-

⁹ Տե՛ս Романов А. К., նշվ. աշխ., էջ 85-86:

տիվ ենթադրությունների վրա, որոնք չեն համապատասխանում հատուկ սկզբունքներում ընդգրկված տարրերին: Սակայն միայն այն փաստը, որ կոնկրետ գործով որոշումը չեղյալ է հայտարարվել, պարտադիր կերպով չի դադարեցնում այդ որոշման մեջ հայտարարված դոկտրինի ընդհանուր սկզբունքները:

Ստատուտային իրավունքն ու նախադեպային իրավունքն ուղղակիորեն ինտեգրված են Անգլիայի համակարգում այնքանով, որքանով անդրադարձ է կատարվում որոշ բառերի իրավական նշանակությանը: Բառերի մեծամասնությունը ձեռք չեն բերել հատուկ իրավական նշանակություն: Այն դեպքում, երբ գոյություն չունի լավ պատճառաբանված հակառակ նշանակություն, դատարանները թողնում են ուժի մեջ այն սովորական իմաստը, որի համաձայն՝ բառերն օգտագործվում են ստատուտում, մասնավոր փաստաթղթում կամ բանավոր գործարքում: Յուրաքանչյուր դեպքում դատարաններն առավել հաճախ մտահոգվում են ամբողջական արտահայտությունների և կոնկրետ համատեքստում նախադասությունների ազդեցության վերաբերյալ և մեկ բառի նշանակությունը չեն համարում էական: Սակայն որոշ հատուկ դեպքերում նույնիսկ մեկ բառը ձեռք է բերում կարևոր իրավական նշանակություն: Երբ դատելի է ունենում, ստատուտի կառուցվածքի վրա նախադեպի դոկտրինի ազդեցությունը պետք է լինի այնքան մեծ, որքան իր ազդեցությունը մասնավոր փաստաթղթերի կառուցվածքի վրա:

Երբեմն հարկ է հաշվի առնել նաև նախադեպի և ստատուտի մեկնաբանությանը վերաբերող հատուկ հարցերը: Առկա է մեկ առաջարկություն, որի համաձայն՝ եթե ստատուտային բառերը մեկ անգամ մեկնաբանվել են վերադաս դատարանի կողմից, ապա նույնանման ստատուտի մեջ այդ բառերի վերասահմանումը նշված մեկնաբանությանը հաղորդում է խորհրդարանական օրինական ուժ:

Ratio decidendi-ն, ընդհանուր առմամբ, դատարանի կողմից ակնհայտորեն կամ ենթադրաբար դիտարկված իրավունքի ցանկացած կանոն է՝ որպես եզրակացությանը հասնելու համար անհրաժեշտ քայլ: Ընդունված է, որ

անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ գործի փաստերն ու այլ գործերի rationes decidendi-ն: «Quinn v. Leatham» գործում Լորդ Հալբուրիսն արտահայտել է իր կարծիքը¹⁰, որի համաձայն՝ գործը նախադեպ է միայն իր կողմից փաստացիորեն որոշվածի նկատմամբ: Այս տեսանկյունից՝ յուրաքանչյուր գործ ունի որոշակի փաստեր, որոնք իրավաբանները կարող են համարել նյութական, և ratio decidendi-ն հենց այդ նյութական փաստերի համադրությունն է՝ գումարած եզրակացությունը, այսինքն՝ այն գլխավոր նախադրյալը, որը երաշխավորում է դատական կարգադրությունը, եթե նյութական փաստերը կազմեն սիլլոգիզմի (հետևաբանության) երկրորդական նախադրյալը: Որոշ հանգամանքների դեպքում անհրաժեշտ է ընտրել օրենքի առաջարկության վերաբերյալ այս տեսակետը, որի համար գործը նախադեպ է: Օրինակ են ծառայում այն որոշումները, որոնցում ներկայացված չէ որևէ հիմնավորում, և որոշումները, որոնք տարբերակվել են հետագա գործերում:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք պետք է լինի նման տեսակետ՝ ելնելով ստատուտի մեկնաբանությանը վերաբերող բոլոր որոշումներից, Լորդ Դեննինգն իր երկու տարանջատված դատողություններում կարծես դրական է պատասխանել: Լորդ Դեննինգը «Paisner v. Goodrich» գործում նշել է. «Երբ այս դատարանի (Վերաքննիչ դատարանի) դատավորներն որոշում են կայացնում Խորհրդարանի ակտի մեկնաբանության վերաբերյալ, այդ որոշումը պարտադիր է նրանց և նրանց իրավահաջորդների համար: Սակայն այն բառերը, որոնք դատավորներն օգտագործել են որոշում կայացնելիս, պարտադիր չեն: Սա հաճախ շատ նուրբ տարբերակում է, քանի որ որոշումը կարող է արտահայտվել միայն բառերով: Այնուամենայնիվ, դա իրական տարբերակում է, որը լավագույն կերպով կգնահատվի՝ հաշվի առնելով, որ ստատուտ մեկնաբանելիս դատարանի միակ գործառույթը ստատուտի բառերի կիրառումն է տվյալ իրավիճակում: Երբ որոշումը հասել է այդ իրավիճակի, նախադեպի դոկտրինը մեզանից պահանջում է, որ ստատուտը միևնույն ձևով կիրառվի նմանատիպ բոլոր դեպքերում: Երբ առաջանում է նոր իրավիճակ, որը կապ-

¹⁰ Stiu, Quinn v. Leatham, 1901, AC 495, <http://swarb.co.uk/quinn-v-leatham-hl-5-aug-1901/>:

ված չէ նախկին որոշումներով, դատարանը պետք է առաջնորդվի ստատուտով, այլ ո՛չ դատավորի բառերով:»¹¹:

Նշված ելույթն ուղղված է եղել նախորդ գործերի կողմից սահմանված թեստերին և արտահայտել է դրանց նկատմամբ լորդերի բացասական վերաբերմունքը:

Ըստ Լորդ Դեննինգի՝ այն հարցը, թե արդյոք դատարանի առջև վեճը նյութական առումով տարբերվում է նախորդ որոշումով կարգավորված վեճից, պետք է որոշվի դատարանի կողմից նոր գործը լուծելիս, և որ այդ դատարանը ոչ մի կերպ կապված չէ այն սկզբունքով, որը նախորդ գործով դատավորն անհրաժեշտ է համարել իր որոշման համար: Սույն տեսակետը Լորդ Դեննինգը կրկնել է «London Transport Executive v. Betts»¹² գործում:

Վերոնշյալ դիտարկմանը հղում է կատարել Լորդ Ռեյդը, ով, սակայն, չի համաձայնվել դրա հետ:

Լորդ Ռեյդը նշել է. «Ոչ մի դատարան իրավունք չունի իր բառերը փոխարինելու ակտի բառերով: Սակայն դատարանը կարող է և պարտավոր է լուծել կոնկրետ գործով համապատասխան թեստը, իսկ այն դեպքում, երբ թեստը սահմանել է Վերաքննիչ դատարանը, դատարանը պետք է հետևի այդ թեստին բոլոր այն գործերում, որոնք չեն պարունակում էական տարբերություններ... Դա չի նշանակում, թե Վերաքննիչ դատարանի կողմից օգտագործված բառերը պետք է դիտարկվեն այնպես, կարծես Խորհրդարանի ակտի բառեր են: Էականորեն տարբեր հանգամանքների դեպքում դրանք միայն ուղեցույց են, և ո՛չ կանոն:»¹³:

Ցանկացած գործի ratio decidendi-ն ուղեցույց է համարվում միայն էականորեն տարբեր հանգամանքների առկայության դեպքում: Լորդ Ռեյդը, ի տարբերություն Լորդ Դեննինգի, կհամարեր, որ հետագա գործով դատավորը պետք է հաշվի առնի նախորդ դատավորի կողմից օգտագործված բառերն այն հանգամանքը պարզելու համար, թե արդյոք երկու գործի

փաստերի միջև առկա են զգալի տարբերություններ: Ստատուտային մեկնաբանության անդրադարձող գործերի ratio decidendi-ին հնարավոր է հաղորդել սահմանափակ իրավական ուժ: Ընդունված է, որ այն հակասող որոշումները, որոնք պարունակում են միևնույն իմաստով բառեր, չպետք է արձանագրվեն որպես հակասող միայն այն դեպքում, երբ այդ բառերն օգտագործվել են տարբեր ստատուտներում:

Որոշ գործերի դեպքում դատարանը պետք է մեկնաբանի ստատուտում պարունակվող բառերը, իսկ այլ ստատուտում նույն բառերի իմաստի վերաբերյալ որոշումն արդեն իսկ անտեսվել է այն պատճառով, որ գործը վերաբերել է մեկ ուրիշ՝ տարբերվող ստատուտի: Երբ տեղի է ունենում նման պրակտիկա, նախորդ գործի ratio decidendi-ն կարող է մեկնաբանվել սահմանափակ կերպով, քանի որ դատարանը կարող է եզրահանգել, որ նախորդ դատավորը գործել է ավելի կարևոր և գլխավոր սկզբունքով: Ուստի և գոյություն ունեն ստատուտները տարբեր ձևերով մեկնաբանելու հիմնավոր պատճառներ, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք պարունակում են միևնույն բառերը: Անհրաժեշտ է միայն որոշման հիմքերի հստակ շարադրում:

Այն պարագայում, երբ տարբեր ստատուտներում օգտագործվել են միևնույն բառերը, և նախադեպի դոկտրինն օժտված է ընդունվածից ավելի թույլ ուժով, վերասահմանման դեպքում նախադեպը կարող է լինել ավելի պարտավորեցնող, քան դատարանների կողմից մեկնաբանված նախադեպերը: Գրականության տեսանկյունից՝ ստատուտներին վերաբերող այս մեկնաբանությունը նշանակում է, որ առաջին առյուծի դատավորի կողմից ստատուտի պատշաճ մեկնաբանումն ու այդ ստատուտի միևնույն ձևով վերասահմանումը Վերաքննիչ դատարանին կամ Լորդերի պալատին զրկում են այլ մեկնաբանություն տալու հնարավորությունից:

¹¹ Տե՛ս, Paisner v. Goodrich, 1955, 2 QB 343, էջ 358:

¹² Տե՛ս, London Transport Executive v. Betts, 1959, AC 211, էջ 246:

¹³ Տե՛ս, Goodrich v. Paisner, 1957, AC 65, էջ 88:

ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2-րդ վարչության գլխավոր մասնագետ,
ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի
բնական գիտությունների ամբիոնի վարիչ,
մանկավարժական գիտությունների թեկնածու

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՆՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Բյուջետային վերահսկողության մարմիններն արտասահմանյան երկրներում գոյություն ունեն երեք հիմնական ձևով.

1) *բյուջետային վերահսկողության կենտրոնացված համակարգ*¹ միասնական կառուցվածքային ձևով.

2) *ֆինանսական վերահսկողության ապակենտրոնացված համակարգ*² առանձին գոյություն ունեցող բյուջետային վերահսկողության կենտրոնական մարմինների և տարածքային վերահսկիչ այն մարմինների տեսքով, որոնք կազմվել են պետության վարչատարածքային միավորներում վերահսկողություն իրականացնելու նպատակով.

3) *ֆինանսական վերահսկողության խառը համակարգ*. այդ համակարգում պետության մեջ զուգահեռաբար գոյություն ունեն կենտրոնական վերահսկիչ մարմիններ, վերջիններիս տարածքային բաժիններ և համայնքային կամ մունիցիպալ հաշվիչ մարմիններ՝ իշխանության տարածքային մարմինների կողմից ստեղծված: Որպես կանոն՝ բյուջետային վերահսկողության մարմիններ գոյություն ունեն իշխանության տարբեր ճյուղերում՝ օրենսդիր, գործադիր, դատական:

Հանրային ֆինանսների կառավարման համակարգում կարևոր նշանակություն ունի պետությունում բյուջետային ֆեդերալիզմի առկայությունը: Այս առումով անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես են հարաբերակցվում բյուջետային ֆեդերալիզմը և բյուջետային վերահսկողությունը:

Բյուջետային ֆեդերալիզմի գլխավոր դրույ-

թի մեջ առանձնացվում է կենտրոնական և տարածաշրջանային իշխանության միջև բյուջետային հարաբերությունների մի քանի մոդել՝ ապակենտրոնացված, կենտրոնացված և խառը:

Բյուջետային ֆեդերալիզմը՝ որպես ֆինանսների կառավարման սկզբունք, ենթադրում է.

1) կառավարման առնվազն երկու մակարդակ, որոնք իրականացնում են իրենց իշխանությունը միևնույն տարածքի և բնակչության վերաբերյալ.

2) յուրաքանչյուր մակարդակ ունի գործունեության առնվազն մեկ ոլորտ, որտեղ լիովին ինքնավար է.

3) սեփական ոլորտում առկա են կառավարման յուրաքանչյուր մակարդակի ինքնավարության երաշխիքներ (առնվազն օրենսդրության մեջ՝ պարզ հոչակագրերի ձևով)¹:

Բյուջետային ֆեդերալիզմը սահմանվում է որպես «դաշնային իշխանությունների և դաշնության սուբյեկտների իշխանության մարմինների միջև հարաբերություններ՝ բյուջետային իրավունքների և լիազորությունների, ծախսերի ու եկամուտների տարբերակման, նաև վերջիններիս բաշխման կամ վերաբաշխման ոլորտում»²:

Բյուջետային վերահսկողության մարմինների ստեղծումը կամ բացակայությունն անմիջապես կապված չէ այս կամ այն պետության վարչատարածքային կառուցվածքի հետ: Տարածաշրջանային վերահսկիչ մարմինների կազմակերպման օրինակներ կարելի է հանդիպել

¹ Винсент Остром. Смысл американского федерализма: Что такое самоуправляющееся общество, М., Арена, 1993, с. 22.

² Морозова Е. А. Модели бюджетного федерализма в развитых странах и особенности их применения в Российской Федерации, докт. диссерт. М., 2009.

ինչպես դաշնային (ֆեդերատիվ), այնպես էլ միացյալ (ունիտար) պետություններում:

Արտասահմանյան երկրներում վերահսկիչ մարմինները մեծ մասամբ կազմվում են պետության և համայնքային կազմավորումների ֆինանսական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Սակայն կարևոր է նշել, որ այդպիսի մարմինների կազմակերպչական-իրավական ձևերը տարբեր են, և դրանց մեջ կարելի է առանձնացնել հետևյալ երեքը, որոնք առավել հաճախ են հանդիպում.

ա) *խորհրդարանական ֆինանսական վերահսկողություն* (հաշվիչ պալատ, վերահսկիչ պալատ և այլն).

բ) *վարչական ֆինանսական վերահսկողություն*, որում գլխավոր է համարվում կենտրոնական վերահսկողական գերատեսչությունը կամ պետական վերահսկողության ծառայությունը՝ յուրահատուկ իրավական կարգավիճակով (օրինակ՝ իշխանության ճյուղերից որևէ մեկին ենթակա կամ պետության որևէ վերադաս մարմնի հաշվետու չլինելու հանգամանքը).

գ) *դատական ֆինանսական վերահսկողություն* (հաշվարկների դատարան):

Հանդիպում են բյուջետային վերահսկողության վերադաս մարմինների նաև այլ տեսակներ, սակայն, ունենալով տարբեր անվանումներ և կազմակերպչական առանձնահատկություններ, դրանք հաճախ իրականացնում են իրենց գործունեությունը վերը նշված երեք ձևից մեկում:

Հարկ է նշել, որ այս կամ այն պետությունում ստեղծված համապետական բյուջետային վերահսկողության համակարգը կարող է անմիջապես ազդել բյուջետային վերահսկողության տարածաշրջանային կազմակերպություններ կազմակերպման և իրավական կարգավորման վրա:

Բյուջետային վերահսկողության տարածաշրջանային մարմինների ստեղծումն առանձին երկրներում կարող է կապված լինել մի քանի գործոնի հետ.

1) պետական կառուցվածքի առանձնահատկություններ,

2) տեղական ինքնակառավարման անկախ համակարգի առկայություն,

3) տարածաշրջանային կամ ազգային առանձնահատկություններ,

4) տարածաշրջանային այնպիսի կազմավորումների առկայություն, որոնք ունեն հատուկ կարգավիճակ (օրինակ՝ ինքնավար հանրապետություններ):

Բացի Ռուսաստանի Դաշնությունից, որտեղ գոյություն ունեն բյուջետային վերահսկողության տարածաշրջանային մարմիններ, իբրև դաշնային պետության օրինակ կարելի է նշել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը: Այստեղ ստեղծված է բյուջետային վերահսկողության երկմակարդակ համակարգ: Մի կողմից՝ դա Դաշնային Հաշվիչ պալատն է, որը գործում է 1985 թ. ընդունված «Գերմանիայի Դաշնային Հաշվիչ պալատի մասին» օրենքի հիման վրա և պարունակում է հետևյալ իրավական էական ամրագրումը. «Դաշնային Հաշվիչ պալատը բարձրագույն դաշնային վարչական մարմինն է և որպես ֆինանսական վերահսկողության անկախ մարմին՝ ենթարկվում է միայն օրենքին...»³: Մյուս կողմից՝ դրանք տարածաշրջանային հաշվիչ պալատներն են, որոնք գործում են տարածաշրջանային նորմատիվ իրավական ակտերի հիման վրա:

Գերմանիայում վարչատարածքային հաշվիչ պալատների կազմակերպումն էապես չի տարբերվում Դաշնային Հաշվիչ պալատից: Հիմնական տարբերությունը վերահսկողական գործունեության մեթոդիկայի ընտրության մեջ է:

Երկար ժամանակ Գերմանիայում քննարկման առարկա է եղել այն հարցը, թե հաշվիչ պալատներն իշխանության իր ճյուղին պետք է դասել: Երկար բանավեճերից հետո ամրագրվել է, որ հաշվիչ պալատները չեն կարող վերաբերել ո՛չ օրենսդիր, ո՛չ գործադիր, ո՛չ դատական իշխանությանը: Հետևաբար՝ հաշվիչ պալատները, լինելով ազդեցիկ ինքնավար մարմիններ, այս երկրում զբաղեցնում են անկախ դիրք՝ իշխանության բոլոր ճյուղերի հետ հարաբերակցության մեջ: Դա թույլ է տալիս խոսել Գերմանիայում իշխանության չորրորդ՝ վերահսկիչ ճյուղի գոյության մասին:

³ Федеративная Республика Германия: Национальный доклад. Подготовлен ВОФК ФРГ (V съезд ЕВРОСАИ). М., 2002.

Այսպիսով՝ Գերմանիայի պետական կառուցվածքի տարածաշրջանային մակարդակում ստեղծված է վարչատարածքային հաշվիչ պալատների ինքնուրույն համակարգ, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են վարչատարածքային տվյալ միավորի լիազորությունների սահմաններում և օժտված են կազմակերպչական անկախությամբ: Այս փաստը թույլ է տալիս խոսել Գերմանիայում տարածաշրջանային բյուջետային վերահսկողության համակարգում ապակենտրոնացման գոյության մասին:

Այլ տեսակի դաշնային պետություն է Ամերիկայի Միացյալ Նահանգները: ԱՄՆ-ում, ինչպես և Գերմանիայում, գոյություն ունեն նման հարաբերություններ՝ կապված տարածաշրջանային կազմավորումներին հարաբերական ինքնուրույնության տրամադրման հետ: «Բյուջեի և ֆինանսական վերահսկողության մասին» օրենքի համաձայն՝ ԱՄՆ-ում 1921 թվականին կազմավորվել է Ընդհանուր հաշվետվական կառավարում, որտեղ գլխավորն Ընդհանուր վերահսկիչն է, ով նշանակվում է նախագահի կողմից 15-ամյա ժամկետով: Կարևոր է նշել, որ ԱՄՆ-ում նախագահի կողմից Ընդհանուր վերահսկիչի նշանակումը կապված է ֆինանսական վերահսկողության վերին մարմնի կառավարման խառը (նախագահախորհրդարանական) մոդելի ստեղծելու հետ:

Նահանգներում ֆինանսների կառավարման համակարգը զուգահեռ է: Մի կողմից՝ դրանք համապետական վարչական հաստատություններ են, մյուս կողմից՝ իշխանության տարածքային և համայնքային մարմիններ:

ԱՄՆ-ում բյուջետային վերահսկողության համակարգում գերիշխում է վերահսկիչ մարմինների կազմակերպման խորհրդարանական մոդելը⁴:

Տարածքային ֆինանսական (բյուջետային) վերահսկողության մարմիններ ստեղծված են նաև դաշնային պետական կառուցվածք ունեցող մի շարք այլ երկրներում, օրինակ՝ Շվեյցարիայում, Կանադայում (վերջինում, մասնա-

վորապես, «դաշնային սուբյեկտներում» (պրովինցիաներում) ստեղծվող պետական վերահսկողության մարմինները չեն ներառվում պետության դաշնային վերահսկողության համակարգի մեջ⁵:

Հաշվիչ պալատի գործունեության տարածքային ոլորտի խնդրի ինքնատիպ լուծում է գտնված Ավստրիայի օրենսդրության մեջ, որում պալատի իրավական բնույթը կապված է պետական կառուցվածքի դաշնային ձևի հետ: Դաշնության ֆինանսական գործունեության ընդհանուր հարցերով զբաղվելիս Հաշվիչ պալատը ներկայանում է որպես դաշնային խորհրդարանական մարմին: Իսկ երբ վերահսկողության օբյեկտ է տարածքների ֆինանսական գործունեությունը, Հաշվիչ պալատը ներկայանում է որպես համապատասխան լանդտագի (տարածքի) մարմին:

Որպես միացյալ պետության օրինակ, որտեղ գոյություն ունի տարածքային բյուջետային վերահսկողության համակարգ, կարող ենք հիշատակել Ֆրանսիան: Ֆրանսիայի բյուջետային վերահսկողության համակարգին բնորոշ է հաջորդական ապակենտրոնացման, դրան զուգահեռ՝ պետության կողմից վերահսկողության պահպանման քաղաքականությունը, ինչպես նաև ֆինանսական լիազորությունների հստակ տարանջատումը կենտրոնական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունից⁶:

Ֆրանսիայի տարածքային հաշվիչ պալատներն օժտված են եռակի լիազորություններով.

- 1) արտահայտել կարծիքներ և առաջարկներ տեղական վարչական մարմինների բյուջետային ակտերի վերաբերյալ, որոնց հետ կապված կան անհամապատասխանություններ և շեղումներ.
- 2) կայացնել դատական որոշումներ՝ ըստ վարչական բոլոր մարմինների և պետական հաստատությունների հաշիվների.
- 3) ապահովել այդ հաստատությունների

⁴ Sullivan D.M. Local governments as risk takers and risk reducers: an examination of business subsidy controls // Econ. development quart. 2002. №2. P. 120.
⁵ Козирин А. Н. Финансовое право и управление публичными финансами в зарубежных странах, М., 2009, с. 124.
⁶ См., подробнее: Самойлова Л.М. Контроль над исполнением бюджета во Франции: эволюция правового регулирования. Дисс. ... канд. юрид. наук. М., 2008. С. 44.

կողմից պետական միջոցների պատշաճ կատարումը⁷:

Ֆրանսիայում, փաստորեն, հաշվիչ պալատը ներկայանում է որպես բողոքարկիչ դատական ինստանցիա, եթե ընդունված որոշումը վիճելի է⁸:

Տարածքային հաշվիչ պալատներ կան Լեհաստանի Հանրապետությունում, որոնք իրենց գործունեությունը ծավալում են հանրապետության Բարձրագույն վերահսկիչ պալատի տարածքային բաժիններին զուգահեռ⁹:

Իսպանիայում բյուջետային վերահսկողության տարածքային մարմինները ձևավորվել են 1990-ականների սկզբին: Թեև մինչ այդ արտաքին վերահսկիչ մարմիններ կային երկրի գրեթե բոլոր ինքնավար շրջաններում, սակայն Իսպանիայի Հաշվիչ կենտրոնական դատարանը դրանց իրավաբանորեն ենթագերատեսչական տարածքներում բյուջետային վերահսկողության անցկացման մանդատով օժտել է միայն 1990-ական թվականների սկզբին: Նկատենք, որ Հաշվիչ կենտրոնական դատարանն ստուգումներ իրականացնելու իրավունք է վերապահել միայն համատեղ գործունեության պայմանով: Բյուջետային վերահսկողության ոչ թե ուղղաձիգ, այլ՝ հորիզոնական համակարգի ստեղծման հիմնական նպատակն այն է, որ այդպիսի կառուցվածքը նպաստելու է վերահսկողության ամրացմանը և արդյունավետության բարձրացմանն Իսպանիայի ամբողջ տարածքում¹⁰:

Մեծ Բրիտանիայում տարածաշրջանային վերահսկիչ մարմինների զարգացումը կապված է տեղական ինքնակառավարման զարգացած համակարգի գոյության հետ: Մեծ Բրիտանիան բաժանված է տարածաշրջանային կազմավորումների (Անգլիա, Ուելս, Շոտլանդիա, Հյուսիսային Իռլանդիա, նաև՝ Լոնդոն), որոնք իրենց հերթին կազմված են տեղական կազմավորումներից:

Մեծ Բրիտանիան միացյալ պետություն է, նրա բարձրագույն ֆինանսական վերահսկիչ

ինստիտուտը ղեկավարվում է Ընդհանուր հսկիչների և վերստուգիչների (աուդիտոր) կողմից:

Միացյալ պետություն է նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը: Այստեղ ֆինանսական վերահսկողության տարածաշրջանային մարմինների համակարգը ներկառուցված է համապետական ֆինանսական վերահսկողության միասնական համակարգին, սակայն կան նաև տեղային առանձնահատկություններ: Չինաստանում վերահսկողության տարածաշրջանային մարմինները ստորաբաժանվում են համայնքային աուդիտորական հաստատությունների, պրովինցիաների աուդիտորական հաստատությունների, ինչպես նաև ինքնավար տարածաշրջանների աուդիտորական հաստատությունների:

Բուլղարիան ևս պատկանում է այն երկրների թվին, որտեղ տարածաշրջանային բյուջետային վերահսկողության մարմինները ներկառուցված են համապետական ֆինանսական վերահսկողության համակարգին: Այստեղ գոյություն ունեն տարածաշրջանային վերահսկիչ հաշվիչ մարմիններ (տարածաշրջանային ստորաբաժանումներ), սակայն դրանք «Բուլղարիայի Հանրապետության Հաշվիչ պալատի մասին» օրենքի հիման վրա ենթարկվում են անմիջապես Բարձրագույն հաշվիչ պալատին, որն իրականացնում է ստուգումներ, այդ թվում՝ նաև տեղական բյուջեների կատարողականների ստուգումներ:

Արտասահմանյան փորձի վերլուծությունը մեզ թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումը. տարածաշրջանային բյուջետային վերահսկողության մարմինները հիմնականում հետևում են պետական և համայնքային ֆինանսական միջոցների օգտագործման օրինականությանը, ճշգրտությանը և արդյունավետությանը: Տարբեր երկրներ ունեն այդպիսի մարմինների կազմակերպման և իրավական կարգավորման իրենց յուրահատկությունները: Ընդ որում՝ կարևոր է նշել, որ վերջին տարիներին գերիշխող է դարձել հաջորդական բյուջետային վերահսկո-

⁷ Ведель Х. Взаимоотношения Федеральной Счетной палаты и Земельных счетных палат Германии // Отношения между высшими федеральными и местными региональными контрольно-ревизионными органами: материалы международного семинара (г. Москва, 14-16 апр. 1998 г.). М., 1999. С. 43.

⁸ Նույն տեղում, էջ 44:

⁹ Waline C., Desrousseaux P., Pelle B. Controle et evaluation des finances publiques. Paris, 2009. P. 60.

¹⁰ Vázquez R.N. Manual del control externo. Sivilla, 2009. P. 25.

ղության առկա համակարգը ոչ միայն կատարելագործելու, այլ նաև տարածաշրջանային ու տեղական մակարդակներում նախկին վերահսկողության համակարգը որակապես փոխելու միտումը:

Արտասահմանյան երկրներից մեծ մասին բնորոշ է բյուջեի կատարման արդյունքներին հետևելու մեխանիզմների յուրատիպությունը: Այդ երկրների փորձի ուսումնասիրությունից կարելի է հետևություն անել, որ դրանց արտաքին տարածաշրջանային վերահսկիչ մարմինների գործունեության մեջ առաջնային նշանակություն է ստացել նախնական ֆինանսական վերահսկողությունը (փորձագիտական գործունեության տեսքով)՝ նպատակաուղղված տարածաշրջանային և տեղական իշխանությունների կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը: Ընդ որում՝ վերահսկիչ հաստատությունների գործունեությունն ուղղված է ոչ միայն հանրային ֆինանսական

միջոցների շարժի ճշգրտության ստուգմանը, այլև ֆինանսական կառավարման համակարգի կատարելագործմանը՝ ընդհանրապես:

Այսպիսով՝ ինչպես դաշնային, այդպես էլ միացյալ պետություններում բյուջետային վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղիներից մեկը տեղերում բյուջետային վերահսկողության հատուկ մարմինների ստեղծումն է և դրանք բոլոր սուբյեկտների վերաբերյալ վերահսկիչ միջոցառումներ անցկացնելու իրավունքով օժտելը: Դա թույլ է տալիս ստեղծել միասնական իրավական միջավայր առանձին վարչաքաղաքական տարածքներում և ապահովել բյուջետային վերահսկողության անհրաժեշտ մակարդակ՝ առանց լրացուցիչ ծախսերի:

Այդ փորձը կարող է նպաստել բյուջետային վերահսկողության կազմակերպման համակարգի արդիականացմանը նաև Հայաստանի Հանրապետությունում:



ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության մագիստրոս,
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

**ԿՈՂՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածը նվիրված է քրեական դատավարության ընթացքում կողմերի հավասարությանն ու մրցակցությանը: Հոդվածում ներկայացված են Եվրոպական դատարանի դիրքորոշումները վերը նշված սկզբունքների վերաբերյալ, և զուգահեռներ են անցկացված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա կարգավորումների հետ: Հոդվածում անդրադարձ է կատարված նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի այն կարգավորումներին, որոնք միտված են կողմերի անհավասարությունը մեղմելուն:

Բանալի բառեր. մրցակցություն, կողմերի հավասարություն, պաշտպան, Եվրոպական դատարան:

ГАЯНЕ МЕЛИКЯН

Магистр юридических наук,
помощник заместителя генерального прокурора РА

**СОСТЯЗАТЕЛЬНОСТЬ И РАВНОПРАВИЕ СТОРОН В ХОДЕ УГОЛОВНОГО
СУДОПРОИЗВОДСТВА**

Статья посвящена состязательности и равноправию сторон в ходе уголовного судопроизводства. В статье представлены постановления Европейского суда по вышеуказанным принципам. и проведены параллели с существующими положениями Уголовно-процессуального кодекса Республики Армения. В статье также рассматриваются положения проекта Уголовно-процессуального кодекса РА, направленные на смягчение неравенства сторон.

Ключевые слова: состязательность, равноправие сторон, защитник, Европейский суд.

GAYANE MELIKYAN

Master of studies in law,
Assistant of deputy prosecutor general of the RA

**THE PRINCIPLES OF ADVERSARIAL TRIAL AND EQUALITY OF ARM IN
CRIMINAL PROCEDURE**

The article is devoted to the principles of adversarial trial and equality of arms in the course of criminal proceedings. The article presents the judgments of the European Court of Human Rights covering the above stated principles and draws parallels with the existing provisions of the Code of Criminal Procedure of the Republic of Armenia. The regulations of the draft Criminal Procedure Code of RA aimed at mitigating the inequality of the parties are also discussed.

Keywords: adversarial trial, equality of arms, defender, European court.

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի իրավաբան

ՎՃՈՒՐԵԿ ԲՈՂՈՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են Վճռաբեկ բողոքի նախնական քննության արդյունքով կայացվող դատական ակտերի տեսակները, այսինքն՝ այն իրավական հետևանքները, որոնք առաջանում են վճռաբեկ բողոքի ձևին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները չպահպանելու դեպքում: Քննարկվել է, թե՛ որ պայմաններում անձի համար երաշխավորված կլինի ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքը: Համակողմանի անդրադարձել ենք վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, բողոքը վերադարձնելու, բողոքը ընդունելու կամ մերժելու հիմքերին ու ժամկետներին: Վերլուծել ենք որոշումների պատճառաբանվածությունը, որ կոչված է պարզաբանելու, թե՛ ինչն է դատարանը հանգել այս կամ այն հետևության, որ իրավանորմով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, քանի որ պատճառաբանվածությունը պահանջում է ոչ միայն հիմնավորված և համապատասխան որակ ունեցող դատական ակտերի առկայություն, այլև որոշակի այլ որակների ապահովում, որոնք դատական ակտը դարձնում են հանրությանը և մասնագիտական լսարանին հասանելի ու համոզիչ: Հոդվածի ուսումնասիրությունն իրականացրել ենք քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի և գործող օրենսգրքի համեմատական վերլուծության միջոցով:

Բանալի բառեր. Վճռաբեկ բողոք, դատական ակտեր, արդար դատաքննություն, ողջամիտ ժամկետներ, դատարանի մատչելիություն:

ВАРДУИ САРКИСЯН

Юрист Молодёжного фонда Армении

ВИДЫ СУДЕБНЫХ АКТОВ, ПРИНЯТЫХ В РЕЗУЛЬТАТЕ ПРЕДВАРИТЕЛЬНОГО РАССЛЕДОВАНИЯ КАССАЦИОННОЙ ЖАЛОБЫ

В рамках статьи рассмотрены виды судебных актов, принимаемых в результате предварительного расследования на Кассационную жалобу, то есть те юридические последствия, которые возникают в случае несоблюдения требований формы и содержания кассационной жалобы. Было обсуждено, при каких обстоятельствах будет гарантировано право лица на подачу жалобы, доступа к суду и справедливое судебное разбирательство в разумные сроки. Всесторонне коснулись вопросов допущения Кассационной жалобы без рассмотрения, возврата жалобы, оснований и сроков приятия или отклонения жалобы.

Проанализировали причины принятия решений, которые призваны разъяснить, почему суд пришел к такому или иному выводу, какими правовыми нормами он регулировался при принятии данного решения, потому что причинность требует не только обоснованности и соответствующего качества существующих судебных актов, но и обеспечения некоторые другие качества, которые делают судебный акт доступным и убедительным для общества и профессиональной аудитории.

Исследование статьи мы провели с помощью сравнительного анализа нового Уголовно-процессуального кодекса и действующего Кодекса.

Ключевые слова: Кассационная жалоба, судебные акты, справедливый суд, разумные сроки, доступность суда.

YARDUHI SARGSYAN

Lawyer Youth foundation of Armenia

THE TYPES OF JUDICIAL ACTS ADOPTED AS A RESULT OF THE PRELIMINARY INVESTIGATION OF THE CASSATION APPEAL

In the framework of the article the types of judicial acts adopted as a result of the preliminary investigation of the cassation complaint were examined i.e. those legal consequences that arise in case of non-compliance with the requirements of the cassation complaint form and contents. It was discussed in which conditions the person’s right of substantiated complaints, accessibility to court and fair trial within a reasonable term is guaranteed. We have touched upon the bases and terms of the cassation complaint without examination, returning the complaint, accepting or declining the complaint. We have analyzed the reasoning of the decisions that are meant to clarify why the court has come to this or that conclusion, which legal provisions were behind making such a decision as reasonableness requires not only the existence of justified judicial acts with respective quality, but also providing certain other qualities that make the judicial act accessible and convincing both to the public and to the professional audience. We have conducted the study through a comparative analysis of the new draft of Criminal Procedure Code and the current Code.

Keywords: Cassation protest, judicial acts, fair trial reasonable terms, accessibility of the court.

* * *

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և
քրեաբանության ամբիոնի դոցենտ,
ոստիկանության փոխգնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Հոդվածը նվիրված է քրեաիրավական գնահատողական կատեգորիաների մեկնաբանությանը: Գնահատողական է համարվում այն կատեգորիան, որի բովանդակությունն ամբողջությամբ պարզաբանված չէ իրավական ակտով: Հեղինակն առանձնացնում է գնահատողական կատեգորիաների առկայության դրական և բացասական կողմերը: Հոդվածում կարևորվել է դատարանի դերը միատեսակ դատական պրակտիկա ստեղծելու համար:

Բանալի բառեր. գնահատողական կատեգորիա, հանցակազմ, դատարան, դատական պրակտիկա, քրեական օրենսգիրք, նորմի մեկնաբանություն:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 106 2018

АРМИНЕ МЕЛИКСЕТЯН

Доцент кафедры уголовного права и криминологии
Академии Образовательного комплекса Полиции РА,
подполковник полиции,
кандидат юридических наук

**ЗНАЧЕНИЕ ПРАВОВЫХ ПОЗИЦИЙ СУДОВ В ПРОЦЕССЕ ТОЛКОВАНИЯ
УГОЛОВНО-ПРАВОВЫХ ОЦЕНОЧНЫХ КАТЕГОРИЙ**

Статья посвящена толкованию уголовно-правовых оценочных категорий. Оценочными считаются те категории, содержание которых полностью не прояснено правовым актом. Автор выделяет положительные и отрицательные стороны оценочных категорий. В статье отмечена роль суда для создания единой судебной практики.

Ключевые слова: оценочная категория, состав преступления, суд, судебная практика, уголовный кодекс, толкование нормы.

ARMINE MELIKSETYAN

An associate professor of the Chair of Criminal Rights and Criminology,
Academy of Educational Complex RA Police,
police lieutenant colonel, PhD

**THE VALUE OF LEGAL POSITIONS OF COURTS IN THE PROCESS OF INTERPRETATIONS OF
EVALUATIVE CRIMINAL CATEGORIES**

The article is devoted to the interpretation of evaluative criminal categories. The category is considered evaluative if is not completely clarified by a legal act. An author distinguishes positive and negative sides of evaluative category. In the article the role of court is marked for creation even judicial practice.

Keywords: evaluative category, corpus delict, court, judicial practice, criminal code, interpretation of the norm.

* * *

ԱՐՄԻՆԵ ՉՈՐԱՆՅԱՆ

ՀՀ փաստաբան

**ՊԱՐՏԱԴԻՐ (ՀԱՐԿԱԴԻՐ) ՄԵԴԻԱՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում պարտադիր մեդիացիայի կիրառման իրավական հետևանքներին: Աշխատանքում վերլուծվել են ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքում մեդիացիայի վերաբերյալ ամրագրված հոդվածները: Եվրոպական երկրների իրավական համակարգի փորձի ուսումնասիրության արդյունքով առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում կիրառել պարտադիր մեդիացիան:

Բանալի բառեր. իրավական համակարգ, իրավունքներ և օրինական շահեր, արտադատական կարգ, միջազգային վեճեր, քաղաքացիական գործեր, պարտադիր մեդիացիա, կամավոր գործընթաց:

АРМИНЕ ЧОБАНЯН

Палата адвокатов в РА

**ПРАВОВЫЕ ПОСЛЕДСТВИЯ ПРИМЕНЕНИЯ ПРИНУДИТЕЛЬНОГО ПОСРЕДНИЧЕСТВА
(МЕДИАЦИИ) В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Данная статья касается правовых последствий применения обязательной медиации в Республике Армения.

В работе проанализированы все статьи, касающиеся медиации, нового гражданского процессуального кодекса Республики Армения и в результате изучения опыта правовой системы в европейских странах было предложено применить обязательную медиацию в РА.

Ключевые слова: Правовая система, права и правовые интересы, внесудебная категория, международные споры, гражданские дела, обязательное посредничество, добровольный процесс.

ARMINE CHOBANYAN

Chamber of Advocates in RA

**LEGAL CONSEQUENCES OF THE USE OF COMPULSORY MEDIATION
IN THE REPUBLIC OF ARMENIA**

This article deals with the legal consequences of applying mandatory mediation in the Republic of Armenia.

In the article analyzed related articles of casing mediation of the new civil procedural code of the Republic of Armenia, and as a result of studying the experience of the legal system in European countries, it was suggested to apply compulsory mediation to the Republic of Armenia.

Keywords: legal system, rights and legal interests, extrajudicial category, international disputes, civil cases, compulsory mediation, voluntary process.

* * *

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 106 2018

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի օգնական

**ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՊԱՍՏԱՆԻ ՀԱՅՅՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Այս հոդվածի նպատակն է վերլուծել այսպես կոչված «Մուսուլմանական արգելքի» իրավականության խնդիրը միջազգային հանրային իրավունքի տեսանկյունից: Չնայած այս հիմնահարցն ունի բազմաթիվ խնդիրներ, հոդվածը կենտրոնանում է այն հարցի վրա՝ արդյոք ԱՄՆ գործադիրի հրամանը խախտում է միջազգային փախստականների իրավունքը՝ մուտք դեպի երկրի տարածք և ապաստան խնդրելու տեսանկյունից: Փախստականները ձգտում են անվտանգության այլ երկրում, երբ նրանք կանգնում են հալածանքի սպառնալիքի դիմաց, և սեփական երկիրը չի ցանկանում կամ չի կարող պաշտպանել նրանց: Նրանք այն մարդիկ են, որոնց ապաստան տրամադրելու մերժումը կարող է պայթյունավտանգ հետևանքներ ունենալ: Նրանց

իրավունքները պետք է հարգվեն ապաստան խնդրելուց առաջ, ապաստան խնդրելու ընթացքում և հետո:

Բանալի բառեր. փախստական, ապաստան, չհանձնելու պարտավորություն, յուսկոգենս, սովորությամբ իրավունք, փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա («1951թ. կոնվենցիա»):

АНАИТ ПЕТРОСЯН

Помощница депутата Национального Собрания Республики Армения

**ЗАКОННОСТЬ МУСУЛЬМАНСКОГО ЗАПРЕТА И ТЕРРИТОРИАЛЬНОГО ДОСТУПА,
А ТАКЖЕ ОБРАЩЕНИЕ ПО ПРЕДОСТАВЛЕНИЮ УБЕЖИЩА С ТОЧКИ ЗРЕНИЯ
МЕЖДУНАРОДНОГО ОБЩЕСТВЕННОГО ПРАВА**

Цель этой статьи–анализировать так называемую проблему легальности “Мусульманского запрета” с точки зрения международного общественного права. Несмотря на то, что этот вопрос имеет множество проблем, эта статья уделяет основное внимание на то, нарушает ли Исполнительный приказ США права международных беженцев с точки зрения доступа в территорию страны и предоставления убежища. Беженцы стремятся к безопасности в другой стране, когда они сталкиваются с угрозой преследования и их страна не хочет или не в силах защитить их. При отказе убежища таких людей, последствия могут быть взрывоопасными. Их права не должны нарушаться прежде чем просить убежище, во время и после предоставления убежища.

Ключевые слова: беженец, убежище, обязательство не сдаваться, юс когенс, конвенция о статусе беженцев (Конвенция 1951 г.).

ANAHIT PETROSYAN

National Assembly of the Republic of Armenia, Deputy Assistant

**THE LEGALITY OF MUSLIM BAN IN RELATIONS OF ACCESS TO TERRITORY AND
SEEKING ASYLUM UNDER PUBLIC INTERNATIONAL LAW**

The purpose of this article is to analyze the issue of legality of so called “Muslim ban” under public international law. While this issue has a myriad of problems the article will be focused to the question whether the USA Executive order violates international refugee law in relations of access to territory and seeking asylum. Refugees seek safety in other countries when they face a threat of persecution and their own country is unwilling or unable to protect them. When experiencing of fearing serious violations of their fundamental rights, they have no choice but to leave their homes, their families and communities in order to survive. These are people for whom denial of asylum has potentially deadly consequences and their rights should be respected prior to, during, and after the process of seeking asylum.

Keywords: refugee, asylum, non-refoulment obligation, jus cogens, customary law, Convention relating to the Status of Refugees (‘1951 Convention’).

ՎԱԶԻԿ ԲՐՈՒՏՅԱՆ

Մանկ. գիտ. դոկտոր

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր

**ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ
ՀԱՎԱԿՈՒՈՒԴՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԴԱՅՄԱՆ**

Կոռուպցիայի հակազդման արդյունավետության բարձրացումը պայմանավորված է տվյալ երևույթի առավել բարձր աստիճանի հասարակական վտանգավորությամբ: Հոդվածում քա-
ցահայտվում է իրավաբանների հակակոռուպցիոն իրավագիտակցության ձևավորումը, որի
լավագույն միջոցը, հեղինակի կարծիքով, դաստիարակությունը և հակակոռուպցիոն կրթու-
թյունն է:

Բանալի բառեր. կոռուպցիա, իրավաբանների իրավագիտակցություն, հակակոռուպցիոն
քաղաքականություն, իրավական դաստիարակություն, իրավական կրթություն:

ВАЧИК БРУТЯН

Доктор пед. наук,

ректор Армянско-Российского международного

университета “Мхитар Гош” в РА

**ПОВЫШЕНИЕ ПРАВОСОЗНАНИЯ ЮРИСТОВ, КАК ЭФФЕКТИВНОЕ УСЛОВИЕ
РЕАЛИЗАЦИИ АНТИКОРРУПЦИОННОЙ ПОЛИТИКИ РА**

Повышение эффективности противодействия коррупции обусловлено крайне высокой
степенью общественной опасности данного явления. В статье раскрываются сущность форми-
рования антикоррупционного правосознания юристов, одним из способов формирования
которого автор считает воспитание и антикоррупционное образование.

Ключевые слова: коррупция, правосознание юристов, антикоррупционная политика,
правовое воспитание, правовое образование.

YACHIK BRUTYAN

Doctor of ped. science,

Rector of the Armenian-Russian International University of

“Mkhitar Gosh in” RA.

**INCREASING THE LEGAL AWARENESS OF LAWYERS AS AN EFFECTIVE CONDITION
IN THE REALIZATION OF ANTI-CORRUPTION POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA**

Increasing the effectiveness of the fight against corruption is conditioned by the extreme degree
of public danger of this phenomenon. The article reveals the essence of the formation of anti-
corruption legal awareness of lawyers, one of the ways of formation of which the author considers
education and anti-corruption education.

Keywords: corruption, legal awareness of lawyers, anti-corruption policy, legal education and
upbringing.

ԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՆԱԽԱԴԵՊԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սույն գիտական հոդվածում ներկայացվում են Անգլիայի իրավունքի աղբյուրները: Մանրամասն բնութագրվում են դրանց տեսակները, ծագման եղանակներն ու առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվում ընդհանուր իրավունքի համակարգի աղբյուրների հարաբերակցության և ենթակայության հարցերին: Միաժամանակ դիտարկվում են ստատուտների կիրառման դեպքերը: Նկարագրվում է նաև որոշ դատական գործերի ratio decidendi-ն:

Բանալի բառեր. իրավունքի աղբյուր, նախադեպ, սովորույթ, իրավունքի պատմություն, ստատուտ, ratio decidendi, դատական գործունեություն:

АННА АКОБЯН

Соискатель НАН РА, Института философии,
социологии и права

ПРЕЦЕДЕНТ В СИСТЕМЕ ИСТОЧНИКОВ ОБЩЕГО ПРАВА

В данной научной статье представлены источники английского права. Подробно характеризуются их виды, способы происхождения и их особенности. Затрагиваются вопросы соотношения и субординации источников в системе общего права. Одновременно рассматриваются случаи применения статутов. Также описывается ratio decidendi некоторых судебных дел.

Ключевые слова: источник права, прецедент, обычай, история права, статут, ratio decidendi, судебная деятельность.

ANNA HAKOBYAN

An applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

THE PRECEDENT IN THE SYSTEM OF COMMON LAW SOURCES

The following scientific article presents the sources of English law. Their types, methods of origin and features are described in detail. The matters of correlation and subordination of the sources in the common law system are concerned. In the mean time, the cases of statute application are considered. The ratio decidendi of some judicial cases is also described.

Keywords: source of law, precedent, custom, history of law, statute, ratio decidendi, judicial activity.

ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2-րդ վարչության գլխավոր մասնագետ,
 ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի
 բնական գիտությունների ամբիոնի վարիչ,
 մանկավարժական գիտությունների թեկնածու

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ինչպես դաշնային, այնպես էլ ունիտար պետություններում բյուջետային վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղիներից մեկը տեղերում բյուջետային վերահսկողության հատուկ մարմինների ստեղծումն է և դրանք բոլոր սուբյեկտների վերաբերյալ վերահսկիչ միջոցառումներ անցկացնելու իրավունքով օժտելը: Դա թույլ է տալիս ստեղծել միասնական իրավական դաշտ առանձին վարչական տարածքներում և առանց լրացուցիչ ծախսերի ապահովել բյուջետային վերահսկողության անհրաժեշտ մակարդակ:

Արտասահմանյան երկրների փորձը կարող է օգտագործվել նաև Հայաստանի Հանրապետությունում բյուջետային վերահսկողության կազմակերպման համակարգի արդիականացման գործընթացում:

Բանալի բառեր. բյուջետային վերահսկողություն, դաշնային պետություն, ունիտար պետություն, վարչական տարածք, իրավական դաշտ, արդիականացում:

ГРИГОР НЕРСИСЯН

Главный специалист 2-го управления Аудиторской палаты РА,
 заведующий кафедрой естественных наук
 Государственной академии кризисного управления МЧС РА,
 кандидат педагогических наук.

ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ БЮДЖЕТНОГО КОНТРОЛЯ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

Одним из способов повышения бюджетного контроля как в федеральных, так и в унитарных государствах является создание специальных органов бюджетного контроля на местах и наделение их правами для проведения контрольных мероприятий в отношении всех субъектов. Это позволяет создать единую правовую базу на отдельных административных территориях и без дополнительных затрат обеспечить необходимый уровень бюджетного контроля.

Опыт зарубежных стран также может быть использован в процессе модернизации системы бюджетного контроля в Республике Армения.

Ключевые слова: бюджетный контроль, федеральное государство, унитарное государство, административная территория, правовое поле, модернизация.

GRIGOR NERSISYAN

The chief specialist of the 2-nd board of the Audit chamber of R.A.
 The chairman of natural sciences of the Crises management State academy,
 candidate of pedagogical sciences

**PECULIARITIES OF LEGAL REGULATION OF BUDGETARY CONTROL
 IN ABROAD COUNTRIES**

One of the ways to increase budget surveillance is the creation of special budget control bodies on the ground in both the federal and unitary states and giving them the right to control the activities of all entities. It allows to create unity legal area in the separate administrative territories and to ensure the level of budget control without additional costs.

The experience of foreign countries can also be used in the process of modernizing the budget control system in the Republic of Armenia.

Keywords: budgetary control, federal state, unitary state, administrative territory, legal area, modernization.

ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: